

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 19/9 որոշում

Հաշվեքննությունն իրականացվել է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» Եվրոպական միության բյուջետային աջակցության թիվ ԵՀԳ/2015/038-229 համաձայնագրի պահանջով:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ներառյալ իրավանախորդները

Ստուգման հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 22/10 որոշում

Ստուգման օբյեկտը

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Հաշվեքննության առարկան

Ստանդարտների մշակման և հաստատման գործընթաց

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2019 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն:

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 և 300 ստանդարտների համաձայն:

**Հաշվեքննություն
իրականացնող
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերմիններ և հասկացություններ

Սեղմագիր (Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն)

1. Ներածություն
 - 1.1 Ընդհանուր տեղեկատվություն
 - 1.2 Հաշվեքննության նպատակը
 - 1.3 Հաշվեքննության խնդիրները
 - 1.4 Հաշվեքննության շրջանակը
 - 1.5 Հաշվեքննության չափանիշները
 - 1.6 Ինչպես է իրականացվել հաշվեքննությունը
 - 1.7 Ճանապարհային քարտեզ
2. Ստանդարտացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում
3. Ստանդարտացման պլանավորման գործընթաց
4. Ստանդարտների մշակման, հաստատման և արդիականացման գործընթաց
5. Ստանդարտացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն
6. Այլ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ
7. Ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ
 - Օգտագործված փաստաթղթերի ցանկ
 - Հավելվածներ

Տերմիններ և հասկացություններ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

Լիազոր մարմին – ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Նախարարություն – ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Ազգային մարմին - «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ

ՍԱԻ – «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ

ԵԱՏՄ- Եվրասիական տնտեսական միություն

ՓԲԸ- փակ բաժնետիրական ընկերություն

ՏՀ - տեխնիկական հանձնաժողով

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՍԵՂՄԱԳԻՐ)

Հայաստանի Հանրապետության համար գիտելիքահեն տնտեսության ստեղծման և զարգացման հիմնական պահանջներից մեկը ստանդարտացումն է (իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելուն ուղղված գործունեություն): ՀՀ տնտեսական զարգացման համար ոլորտի կարևորությունը և ՀՀ կողմից ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ինտեգրման գործընթացում ազգային ստանդարտների համապատասխանեցման անհրաժեշտությունը պատճառ են հանդիսացել, որպեսզի ՀՀ Հաշվեքնիչ պալատը կատարողականի հաշվեքննություն իրականացնի ստանդարտացման գործընթացի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման լիազորված մարմինն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը¹, որը մշակում և ապահովում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը, իսկ ստանդարտացման ազգային մարմինն է՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, որի հիմնական առաքելությունն է՝ առաջնորդել ստանդարտացման ազգային համակարգի զարգացումը, ինչպես նաև նպաստել նորարական ազգային ստանդարտների ներդրմանը և կիրառմանը: Ոլորտի քաղաքականության իրականացման ապահովման պարտականությունը վերապահված է նախարարությունը, որը նաև պետք է վերահսկի ՍԱԻ-ի գործունեությունը: Հաշվեքննությունն իրականացվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության 2017-2018թթ. գործունեության նկատմամբ, սակայն հաշվի է առնվել նաև նախարարության վերահսկողական գործառնությունները:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 2017թ.-ին մշակել է 55 ստանդարտ, իսկ 2018թ.՝ 30 ստանդարտ: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ այդ ժամանակահատվածում և՛ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, և՛ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը ստանդարտների մշակման և հաստատման գործընթացում իրենց պարտականությունները ամբողջովին և պատշաճ չեն իրականացրել: Մասնավորապես՝

- ստանդարտների մշակման ծրագրի պլանավորման աշխատանքների սահմանված ժամանակացույցը չի պահպանվել,
- պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը հաստատվել է նախարարի կողմից, սակայն տվյալ իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարությանը: Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրերում ստանդարտների ընդգրկման համար հաստատված մեթոդաբանության բացակայությունը

¹ ՀՀ կառավարության 04.07.2012թ. թիվ 883-Ն որոշում

հանգեցրել է ծրագրում այնպիսի ստանդարտների ներառմանը, որոնք պետական կառավարման մարմինների կողմից չեն պահանջվել,

- տարեց տարի գործողության մեջ դրված (մշակված և հաստատված) ազգային ստանդարտների քանակը նվազել է: 2018թ.-ի այդ ցուցանիշը կազմել է 2014թ.-ին ընդունված և գրանցված ազգային ստանդարտների թվի ընդամենը 38%-ը: 2017-2018թթ. ստանդարտները հաստատվել են և դրվել են գործողության մեջ առանց տեխնիկական հանձնաժողովի եզրակացության: Ավելին, տեխնիկական խորհուրդ ընդհանրապես գոյություն չի ունեցել, իսկ 2017թ.-ին գործողության մեջ են դրվել թվով 10 ստանդարտներ, որոնք փաստացի գոյություն չունեն:
- Մի շարք ստանդարտների մշակման աշխատանքներում համապատասխան ոլորտների մասնագետներ ներգրավված չեն եղել: Բազմաթիվ ստանդարտների նախագծերը շահագրգիռ մարմիններին ուղարկվել են կարծիքի ստանդարտի ընդունումից հետո: Ավելին, մի շարք դեպքերում ստանդարտի հաստատումից հետո ստացված առաջարկությունները առանց տեխնիկական հանձնաժողովի նիստում քննարկելու, ներառվել են նախկինում ընդունված ստանդարտներում: 2017 և 2018 թվականներին, յուրաքանչյուր տարի համապատասխանաբար թվով 3 ստանդարտի ընդունման համար հիմք հանդիսացող տեխնիկական հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել ստանդարտներն ընդունելուց հետո՝ 2017թ.-ին շուրջ երեք ամիս անց, իսկ 2018թ.-ին մեկ շաբաթ անց:
- ՍԱԻ-ի կառավարման խորհրդի և նախարարության վերահսկողական համակարգերը 2017-2018թթ. գործել է ոչ լիարժեք, մասնավորապես՝ կառավարման խորհուրդը չի գործել 2017թ. հոկտեմբերից, իսկ նախարարությունը չի ձեռնարկել համապատասխան վերահսկողական միջոցառումներ:

Հիմնվելով հաշվեքննության արդյունքների վրա՝ հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017-2018թթ. ստանդարտների պլանավորման, մշակման, ընդունման և արդիականացման գործընթացները իրականացվել են բազմաթիվ թերություններով: Նախարարությունը պատշաճ մակարդակով չի վերահսկել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության գործունեությունը և համապատասխան միջոցներ չի ձեռնարկել թերությունները շտկելու ուղղությամբ: Հետևաբար, հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017-2018 թվականներին ստանդարտների մշակման և հաստատման գործընթացի համար հատկացված ֆինանսական միջոցների օգտագործումը չի հանգեցրել օրենսդրորեն սահմանված նպատակային արդյունքների ամբողջական ստացմանը:

Հաշվեքննիչ պալատը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը առաջարկում է՝

1. Մշակել ոլորտի զարգացման արդի քաղաքականություն և սահմանել ստանդարտացման ոլորտի հեռանկարները:

2. Հրատապ հաստատել ՓԲ ընկերության կառավարման խորհրդի անհատական կազմը և ապահովել խիստ վերահսկողություն օրենքով վերջինիս վերապահված բոլոր գործառույթների լիարժեք կատարման համար:
3. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այսուհետ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը:
4. Քայլեր ձեռնարկել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը պարբերաբար աուդիտի ենթարկելու ուղղությամբ:
5. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կանոնադրության համաձայն ձևավորել Վերստուգող հանձնաժողով և ապահովել դրա բնականոն գործունեությունը:

Հաշվեքննիչ պալատը «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին առաջարկում է՝

1. Ստանդարտացման տարեկան ծրագրերի հաստատման նախապատրաստական աշխատանքները կազմակերպել սահմանված ժամկետներում:
2. Մշակել և հաստատել պետական ստանդարտացման ամենամյա ծրագրում ներառվող ստանդարտների ընտրության մեթոդաբանություն, որը հիմնված կլինի ստանդարտացման ռազմավարության և ՀՀ-ում գերակա հռչակված ոլորտների առաջնահերթությունների վրա:
3. Ռազմական արդյունաբերության արտադրանքի համար մշակել ստանդարտացման աշխատանքների ամենամյա ծրագիր:
4. Տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները կազմակերպել ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան, հնարավորինս շուտ վերանայել և հաստատել բոլոր հանձնաժողովների անհատական կազմը, կանոնադրությունները և աշխատանքային ծրագրերը:
5. Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ մշակել ստանդարտների վաճառքի ռազմավարություն, դրա հիմքում դնելով հասարակության լայն շրջանակների իրազեկվածության բարձրացման բաղադրիչ:

Կարեն Կարապետյան
 ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
 _____ դեկտեմբերի 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
 Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ ՍԱԻ): ՍԱԻ-ն ստեղծվել է երկու կազմակերպությունների միաձուլման արդյունքում²: Ընկերության հիմնական խնդիրներից է՝ ստանդարտների նախագծերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացներում արտադրանք արտադրող և ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև փոխհամաձայնության ապահովումը, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության ապահովումը:

Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրով նախատեսված ազգային, համաձայնագրերով նախատեսված միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների մշակման, ստանդարտացման փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծման և վարման աշխատանքները ֆինանսավորվում են պետական բյուջեից³: Ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորման այլ աղբյուրներ են համարվում նաև ազգային ստանդարտների իրացման, պայմանագրային հիմունքներով ստանդարտների մշակման, սերտիֆիկացման և օրենքով չարգելված այլ գործունեության արդյունքում ստացված միջոցները:

1.2 Հաշվեքննության նպատակը

Հաշվեքննության թեմայի ընտրությունը պայմանավորված է երկրի տնտեսական զարգացման և միջազգային շուկաներին ինտեգրման կարևորությամբ: Ավելին, ՀՀ կողմից ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ինտեգրման գործընթացում ազգային ստանդարտների համապատասխանեցումը, տեխնիկական կանոնակարգման ոլորտում միասնական քաղաքականության իրականացումը կարևոր նշանակություն ունեն, որը ՀՀ-ի համար ստեղծում է զարգացման մեծ հեռանկարներ, բայց նաև պարունակում է լուրջ սպառնալիքներ:

Տնտեսության զարգացման և միջազգային ու ԵԱՏՄ շուկաների հետ ինտեգրման գործընթացում միասնական ստանդարտների առկայությունն ու կիրառումը պարտադիր է: Վերջիններս ոչ միայն խթանում են արտաքին առևտուրը և նպաստում ընթացակարգերի պարզեցմանը, այլև նպաստում են միջազգային լավագույն փորձի տարածմանը, տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, էներգախնայողությանը, շրջակա միջավայրի պահպանությանը,

² «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության 25.09.2003թ. N 1180-Ա որոշման, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 08.10.2003թ. N 132 հրամանով՝ «ԵՐԵՎԱՆ-ԹԵՍԻՐ» ՓԲԸ և «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով:

³ 2012 թվականի փետրվարի 8-ի «Ստանդարտացման մասին» ՀՕ-21-Ն օրենքի 19-րդ հոդված

գործարարության զարգացմանը, մարդկանց կյանքի և առողջության անվտանգության ապահովմանը և այլն:

1.3 Հաշվեքննության խնդիրները

Հաշվեքննության իրականացման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտների մշակման և հաստատման գործընթացի կազմակերպման գործառույթի գնահատումը, գործընթացում առկա խնդիրների վեր հանումը և լուծման ուղիների որոնումը:

Հաշվեքննության նպատակներին հասնելու համար հաշվեքննող խումբը կենտրոնացել է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս է կազմակերպվել ստանդարտացման պլանավորման գործընթացը
- Ինչպե՞ս է իրականացվել ստանդարտների մշակման, հաստատման և արդիականացման գործընթացը
- Գոյություն ունի՞ արդյոք վերահսկողություն ստանդարտների մշակման և հաստատման գործընթացում և որքանով է այն գործել:

1.4 Հաշվեքննության շրջանակը

Հաշվեքննությունը հիմնականում վերաբերվել է ՍԱԻ-ի ստանդարտացման բաժնի կողմից իրականացվող գործառույթներին, սակայն ելնելով անհրաժեշտությունից, ներառել է նաև ՍԱԻ-ի և նախարարության կառավարման գործառույթներն ու ստանդարտների մշակման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են ստանդարտացման ամենամյա ծրագրի պլանավորման, ստանդարտների ընտրության առաջնահերթությունների ձևավորման, ֆինանսավորման, գործընթացի կառավարման, ռեսուրսների օգտագործման և ծառայությունների արդյունավետության խնդիրները:

Հաշվեքննության ընթացքում օգտագործվել են բազմաբնույթ մեթոդներ, մասնավորապես՝ օրենսդրական կարգավորումների և նորմերի ուսումնասիրություն, ֆինանսական փաստաթղթերի վերլուծություն, տվյալների բազայի վերլուծություն, հարցումներ և հարցազրույցներ հաշվեքննության (ստուգման) օբյեկտի հետ՝ համապատասխան պատասխանատու աշխատակիցների հետ:

1.5 Հաշվեքննության չափանիշները

Հաշվեքննության չափանիշները սահմանելու համար օգտագործվել են ստանդարտացման ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, պետական ստանդարտացման ամենամյա ծրագրերը, ՍԱԻ-ի կանոնադրությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՍԱԻ-ի միջև կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

պայմանագրերը: Հաշվետվության վերջում նշվել է հաշվեքննության շրջանակներում օգտագործված փաստաթղթերի ցանկը:

1.6 Ինչպես է իրականացվել հաշվեքննությունը

Հաշվեքննությունն իրականացվել է INTOSAI⁴-ի կողմից ընդունված ISSAI 100 և 300 ստանդարտներին համապատասխան, իսկ եզրակացությունները հիմնվել են 1.4 բաժնում նշված բազմաբնույթ մեթոդներով հավաքված ապացույցների վրա:

1.7 Ճանապարհային քարտեզ

Հաշվեքննության 2-րդ գլխում Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է ՍԱԻ-ի և ստանդարտացման գործընթացի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ: Հաշվեքննության 3-րդ, 4-րդ և 5-րդ գլուխներում քննարկվել են հաշվեքննության երեք հարցերը: Հաշվեքննության 6-րդ գլուխը վերաբերում է այլ անհամապատասխանություններին ու խեղաթյուրումներին, որոնք Հաշվեքննիչ պալատը կարևոր է համարում ՍԱԻ-ի ղեկավարության և նախարարության ուշադրությանը ներկայացնելու համար: Հաշվեքննության 7-րդ գլխում ներկայացվել են վերջնական եզրակացություններն ու առաջարկությունները:

Հաշվեքննության ենթարկված ստանդարտացման ամենամյա ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացվել է հավելվածներում:

⁴ INTOSAI – ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների միջազգային կազմակերպություն: ՀՀ հաշվեքննիչ պալատը INTOSAI-ի անդամ է:

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իրավական հիմքերը

Ստանդարտացումը գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի գործադրման դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելուն ուղղված գործունեություն է:

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման լիազորված մարմին է ճանաչվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը⁵, որը մշակում և ապահովում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը, իսկ ստանդարտացման ազգային մարմին՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, որի հիմնական առաքելությունն է՝ առաջնորդել ստանդարտացման ազգային համակարգի զարգացումը, ինչպես նաև նպաստել նորարական ազգային ստանդարտների ներդրմանը և կիրառմանը ՀՀ-ում:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: ՍԱԻ-ի կանոնադրական կապիտալը 31.12.2018թ. դրությամբ կազմել է 62,870 հազ. դրամ՝ 6287 հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 10 000 դրամ: Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխվել են և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

ՍԱԻ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Ստանդարտացման մասին», «Հավատարմագրման մասին» և «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքներով, ՍԱԻ-ի կանոնադրությամբ և այլ համապատասխան իրավական ակտերով:

Ստանդարտների ազգային ինստիտուտի կառուցվածքը

ՍԱԻ-ի 2017թ. հաստիքացուցակով նախատեսվել է 70 հաստիք⁶, նախկին 117-ի փոխարեն, որտեղ ստանդարտացման և ազգային ֆոնդի վարման և վաճառքների բաժինների համար նախատեսվել է թվով 9 հաստիք: Այնուհետև, ՍԱԻ-ի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել են նոր խմբագրությամբ, որի համաձայն նախատեսվել է արդեն թվով 64 հաստիք, որից թվով 10-ը՝ Ստանդարտացման բաժնի համար⁷:


ՍԱԻ-ի վարչակազմակերպական կառուցվածքը 31.12.2018թ. դրությամբ ունեցել է հետևյալ սխեմատիկ տեսքը (այս հաշվեքննության առանցքում է կարմիրով ուրվագծված վանդակը).

⁵ ՀՀ կառավարության 04.07.2012թ. թիվ 883-Ն որոշում

⁶ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.04.2017թ. թիվ 350-Ա հրաման

⁷ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 01.08.2018թ. թիվ 612-Ա հրաման

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի վարչակազմակերպական կառուցվածքը



Ստանդարտացման ազգային մարմնի գործառնությունները

ՍԱԻ-ին իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում⁸

1. ընդունում, գործողության մեջ է դնում և դադարեցնում է ազգային ստանդարտների գործողությունը,
2. հաստատում և հրապարակում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը,
3. ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը,
4. ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և համակարգում դրանց գործունեությունը,
5. մասնակցում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,
6. ստեղծում և վարում է ստանդարտացման փաստաթղթերի ազգային ֆոնդը,
7. իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների և ուղեցույցների, դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) և պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար,
8. մատուցում է տեղեկատվական ծառայություններ,
9. կազմակերպում է ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, կանոնների, ուղեցույցների, ինչպես նաև ամենամյա կատալոգների և եռամսյակային տեղեկատուների հրապարակումը և տարածումը,
10. կազմակերպում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների փորձաքննություն:

⁸ 2012 թվականի փետրվարի 8-ի «Ստանդարտացման մասին» ՀՕ-21-Ն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մաս

Ստանդարտների ազգային ինստիտուտի գործունեության արդյունքները

Ստանդարտացման գործունեության հիմնական արդյունքները ներկայացվել են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ստանդարտացման գործունեության հիմնական արդյունքները⁹

	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը (հատ), այդ թվում՝	1195	1341	677	471	458
ՀՀ ստանդարտներ	19	26	15	10	11
Միջպետական ստանդարտներ	612	925	454	332	322
Միջազգային և եվրոպական ստանդարտներ	564	390	208	129	125

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ազգային ստանդարտների քանակը նվազել է: 2018թ. այդ ցուցանիշը կազմել է 2014թ. ընդունված և գրանցված ազգային ստանդարտների թվի ընդամենը 38%-ը:

Ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը

Օրենքը¹⁰ թույլ է տալիս ՍԱԻ-ն ֆինանսավորվել հետևյալ աղբյուրներից (Հավելված 8)՝

- պետական բյուջեի միջոցներից,
- ազգային ստանդարտների իրացումից ստացված միջոցներից,
- պայմանագրային հիմունքներով ստանդարտների մշակումից ստացված միջոցներից,
- սերտիֆիկացումից ստացված միջոցներից,
- օրենքով չարգելված այլ միջոցներից:

Պետական բյուջեի միջոցներից ստանդարտացման աշխատանքների համար ՍԱԻ-ին 2017թ. և 2018թ. նախատեսվել է հատկացնել տարեկան 14,123.4 հազ. դրամ ֆինանսավորում: Հաշվեքննության շրջանակներում հնարավոր չի եղել պարզել, թե ֆինանսավորման վերը թվարկված այլ աղբյուրներից որքան գումար է հատկացվել ստանդարտացման գործընթացին, քանի որ ըստ այլ աղբյուրներից ստացված եկամուտների և ծախսման ուղղությունների առանձնացված հաշվառում չի վարվում:

Պարտադիր պետական ֆինանսավորման ենթակա աշխատանքները

Օրենքով¹¹ սահմանվում է, որ ստանդարտացման ամենամյա պետական ծրագրով նախատեսված ազգային ստանդարտների մշակման, միջազգային համաձայնագրերով նախատեսված միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների մշակման, ստանդարտացման փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծման և վարման աշխատանքները ենթակա են պարտադիր պետական ֆինանսավորման:

⁹ www.armstat.am

¹⁰ 2012 թվականի փետրվարի 8-ի «Ստանդարտացման մասին» ՀՕ-21-Ն օրենքի 19-րդ հոդված

¹¹ 2012 թվականի փետրվարի 8-ի «Ստանդարտացման մասին» ՀՕ-21-Ն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մաս

Պետական բյուջեի միջոցների հաշվին 2017թ. և 2018թ. «Ստանդարտների մշակման ծառայություններ» ծրագրերի իրականացման համար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՍԱԻ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր¹²: Ծրագրերի շրջանակներում նախատեսված աշխատանքները ներկայացվել են Աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. Ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը պետական բյուջեի միջոցների հաշվին 2017-2018թթ.

Միջոցառումների անվանումը	2017թ.		2018թ.	
	Պլան (հազ.դրամ)	Փաստ (հազ.դրամ)	Պլան (հազ.դրամ)	Փաստ (հազ.դրամ)
1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ, այդ թվում՝	8,800.8	8,865.6	8,242.8	8,242.8
Աշխատավարձ	7,224.0	7,278.0	6,720.0	6,720.0
Նյութեր (Թուղթ, քարթիջ)	110.0	110.0	149.0	149.0
ԱԱՀ	1,466.8	1,477.6	1,373.8	1,373.8
2. Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման աշխատանքներ	2,062.8	2,439.6	2,000.2	2,000.2
Աշխատավարձ	1,584.0	1,898.0	1,560.0	1,560.0
Նյութեր (Թուղթ, քարթիջ)	135.0	135.0	106.8	106.8
ԱԱՀ	343.8	406.6	333.4	333.4
3. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ	3,259.8	2,791.8	3,880.4	3,880.4
Աշխատավարձ	2,640.0	2,250.0	3,120.0	3,120.0
Նյութեր (Թուղթ, քարթիջ)	76.5	76.5	113.7	113.7
ԱԱՀ	543.3	465.3	646.7	646.7
Ընդամենը	14,123.4	14,097	14,123.4	14,123.4

Ինչպես երևում է աղյուսակից 2017թ. և 2018թ. ծրագրերի իրականացման նպատակով աշխատավարձի և նյութերի ձեռքբերման համար նախատեսվել է յուրաքանչյուր տարի 14,123.4 հազ. դրամ:

«Ստանդարտների մշակման ծառայություններ» 2017թ. ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների փաստացի ծախսը չի համապատասխանել դրամաշնորհի պայմանագրով նախատեսված համամասնություններին: Այսպես, միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման աշխատանքներին հատկացված միջոցները գերակատարվել են (կատարման տոկոսը կազմել է 118%), իսկ ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների ֆինանսավորումը փաստացի թերակատարվել է (կատարման տոկոսը՝ 86%):

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վերոնշյալ դրամաշնորհի պայմանագրերը կնքելիս չի պահպանվել սահմանված վճարումների կարգը¹³: Պայմանագրի օրինակելի ձևում¹⁴ սահմանվում է, որ վճարումները կատարվում են միջոցառումների

¹² ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՍԱԻ միջև կնքված 17.05.2017թ. թիվ 21-17 և 16.03.2018թ. թիվ 32-18 պայմանագիր


¹³ ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշում

¹⁴ ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 4.1 կետ

իրականացման մասին հաշվետվությունն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով չեն սահմանվել վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ: Հարկ է նշել, որ ծրագրերով¹⁵ վճարումների կատարման այլ կարգ չի սահմանվել: Սակայն, նախարարության և ՍԱԻ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրերով¹⁶ սահմանվել է, որ վճարումներն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում կազմակերպության կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով հանձնաժողովի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում՝ պետական բյուջեով առաջին եռամսյակի երկու ամսվա համար նախատեսված գումարների վճարումը և յուրաքանչյուր հաջորդ եռամսյակների առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է ՍԱԻ-ի կողմից ներկայացված հայտերի հիման վրա, մինչև ներկայացված հաշվետվությունների՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ընդունումը: Սակայն, նախարարության կողմից չի պահպանվել պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդունման և վճարման կարգը՝ փոխանցումները կատարվել են ամսական կտրվածքով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2018թ. պլանավորված և կատարված ծախսերը համընկել են:

Ազգային ստանդարտների մշակման աշխատանքները

2014-2018թթ. մշակված ազգային ստանդարտների քանակը ներկայացված է ստորև.



Գծապատկերը ցույց է տալիս, որ ստանդարտացման ամենամյա պետական ծրագրերով մշակված ազգային ստանդարտների քանակը 2017-2018թթ. նվազել է:

¹⁵ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 21.04.2017թ. թիվ 395-Ա և 15.02.2018թ. թիվ 117-Ա հրամաններ

¹⁶ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՍԱԻ միջև կնքված 17.05.2017թ. թիվ 21-17 և 16.03.2018թ թիվ 32-18 պայմանագրերի 4.1 կետ

3. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝

- Ստանդարտացման ամենամյա ծրագրի կազմման գործընթացը,
- Ստանդարտների մշակման պահանջի ձևավորումը,
- Պետական ստանդարտացման ծրագրում ստանդարտների ընտրությունը:

3.1 Ստանդարտացման ամենամյա ծրագրի կազմումը

Ստանդարտացման ամենամյա և պետական ստանդարտացման ամենամյա ծրագրերը

Օրենքով¹⁷ սահմանվում է, որ ստանդարտացման ազգային մարմինը հաստատում և հրապարակում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը, որը ներառում¹⁸ է նաև պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը:

Ստանդարտացման ամենամյա ծրագիրը պետք է մշակվի Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա՝ ելնելով տնտեսության զարգացման, տնտեսության մեջ միջազգային նորարարական գիտելիքի և փորձի ներդրման անհրաժեշտությունից և առկա խնդիրներից:

Պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը պետք է մշակվի պետական կառավարման մարմինների առաջարկությունների հիման վրա, հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ և ենթակա է պետական ֆինանսավորման (Այս ծրագիրը պետք է լինի ստանդարտացման ամենամյա ծրագրի բաղկացուցիչ մասը):

2017թ. և 2018թ. միայն պետական ստանդարտացման ծրագիր է մշակվել, ստանդարտացման ամենամյա ծրագիր չի մշակվել: Սա նշանակում է, որ ոչ մի ստանդարտ չի պլանավորվել մշակել, բացի պետական դրամաշնորհով նախատեսվածից: Ավելին, ՍԱԻ-ի կողմից ստանդարտացման ամենամյա ծրագրում ստանդարտների մշակման առաջարկներ ներկայացնելու մասին գրություն չի ուղարկվել տեխնիկական հանձնաժողովներին, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններին:

ՍԱԻ-ի դիրքորոշում – Ստանդարտացման ամենամյա ծրագիր կազմելը բարդ է, քանի որ շահագրգիռ կողմերը նախապես, այսինքն հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում չեն ներկայացնում որոշակի առաջարկություններ ամենամյա ծրագրում ընդգրկելու համար: Նշենք նաև, որ ամենամյա ստանդարտացման ծրագիր կազմելու համար բացակայում են հավելյալ մարդկային ռեսուրսներ՝ լրացուցիչ փորձաքննություններ իրականացնելու համար: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտության դեպքում, ամենամյա պետական ծրագրում ընդգրկված ստանդարտներից բացի այլ ստանդարտներ մշակվում են՝ պայմանագրային հիմունքներով՝ ընթացիկ տարվա ընթացքում՝ ելնելով տվյալ ստանդարտի մշակման անհրաժեշտությունից:

Հաշվեքննողի արձագանք – Չի ընդունվել, քանի որ ստանդարտացման ամենամյա ծրագրի կազմումը «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պարտադիր պահանջ է:

¹⁷ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 10-րդ հոդվածի 2-րդ մաս

¹⁸ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 2-րդ հոդվածի 1-ին մաս

2017-2018թթ. մասնավոր հատվածի կողմից ստանդարտերի մշակման պահանջ գրեթե չի ներկայացվել: Մասնավորապես, միակ դեպքը եղել է «Զի Ար Փի Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը¹⁹, որով մշակվել է թվով 6 ստանդարտ, որից հավանության մեթոդով²⁰ որպես ազգային ստանդարտներ են ընդունվել թվով 4-ը, իսկ վերահրատարակման մեթոդով²¹ թվով 2-ը: Ընդ որում, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ստանդարտներից երկուսի ընդունման համար հիմք հանդիսացող արձանագրությունները²² բացակայել են, իսկ պայմանագրի կատարման ժամկետները չեն պահպանվել²³:

Պլանավորման գործընթացը

ՀՀ ազգային ստանդարտների մշակմանը, համաձայնեցմանը, ընդունմանը, հաստատմանը, նորացմանը (փոփոխությունների, ուղղումների կամ վերանայման միջոցով), ինչպես նաև չեղյալ հայտարարմանը ներկայացվող պահանջները սահմանված են ՀՍ 1.2-2013 «Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Ազգային ստանդարտների մշակումը» հիմնադրությային ստանդարտով, որի համաձայն՝ ՍԱԻ-ն համապատասխան ծանուցումներ է ուղարկում պետական մարմիններին, տեխնիկական հանձնաժողովներին, շահագրգիռ այլ կազմակերպություններին՝ հաջորդ տարվա ստանդարտացման ծրագրում ստանդարտների մշակման առաջարկություններ ներկայացնելու համար՝ նշելով ստանդարտի մշակման տեխնիկական, տնտեսական, սոցիալական նպատակահարմարության հիմնավորումը:

Ամենամյա ծրագրի պլանավորման աշխատանքների ժամանակացույցը ըստ ՀՍ 1.2-2013 ստանդարտի ներկայացված է ստորև.

մինչև պլանավորվողին նախորդող տարվա հոկտեմբերի 1-ը	Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման մասին ծանուցում ստացած պետական մարմինները, տեխնիկական հանձնաժողովները, մշակող, արտադրող, իրացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունները առաջարկություն են ներկայացնում ստանդարտացման ազգային մարմին՝ ստանդարտացման ծրագրի առաջին նախագծի նախապատրաստման համար:
մինչև պլանավորվողին նախորդող տարվա նոյեմբերի 1-ը	Ներկայացրած առաջարկությունների հիման վրա ստանդարտացման ազգային մարմինը կազմում է ստանդարտացման ամփոփիչ ծրագրի նախագծի առաջին խմբագրությունը և այն ուղարկում է բոլոր շահագրգիռ մարմիններին՝ վերջնական քննարկման և համաձայնեցման:
պլանավորվողին նախորդող տարվա նոյեմբերի 20-ից ոչ ուշ	Շահագրգիռ մարմինները ստանդարտացման ամփոփիչ ծրագրի քննարկման արդյունքներն ուղարկում են ստանդարտացման ազգային մարմին:

Այնուհետև, ՍԱԻ-ն կազմակերպում է բացահայտված տարաձայնությունների վերացման աշխատանքները, համաձայնեցված ստանդարտացման ծրագրի նախագծերի հիման վրա կազմում է ստանդարտացման ամփոփիչ ծրագրի վերջնական

¹⁹ 10.10.2017թ. կնքված ՍԱԻ/0014-1 պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 4,000. 0 հազ. դրամ

²⁰ ԳՕՍ 32661-2014, ՀՍ ԳՕՍ Դ 54560-2017, ՀՍ ԻՍՕ 10639:2017, ՀՍ ԻՍՕ 10467:2017

²¹ ՀՍ 39. 5-2018, ՀՍ ԱՍՍՄ Դ 3517-2018

²² ՍԱԻ տնօրենի 03.04.2018թ. N 19-Լ հրամանով գործողության մեջ դրված ՀՍ 395-2018 և ՀՍ ԱՍՍՄ Դ 3517-2018 ստանդարտներ

²³ 30.12.2017թ. փոխարենը աշխատանքները հանձնվել են 05.04.2018թ.-ին

խմբագրությունը, և ստանդարտացման ամփոփիչ ծրագրի նախագիծն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է ՀՀ կառավարություն՝ քննարկման և հաստատման:

ՍԱԻ-ի կողմից չի պահպանվել ստանդարտների մշակման ամենամյա ծրագրի պլանավորման աշխատանքների ժամանակացույցը: Մասնավորապես՝ պետական ստանդարտացման 2017թ. ծրագրի նախագիծը կազմելու համար ՍԱԻ-ն լիազորված մարմինն գրությունն ուղարկել է 16.11.2016թ.-ին, որպեսզի վերջինս տեղեկացնի համապատասխան պետական կառավարման մարմիններին ստանդարտների մշակման վերաբերյալ առաջարկություններ տրամադրելու մասին, իսկ 2018թ. ծրագրի նախագիծը կազմելու համար գրությունն ուղարկվել է 24.11.2017թ.: Պետական գերատեսչությունների կողմից պատասխան գրությունները ստացվել են համապատասխանաբար՝ մինչև 23.12.2016թ. և մինչև 15.01.2018թ.:

2017թ. ծրագրի նախագծի առաջին խմբագրությունն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ վերջնական քննարկման և համաձայնեցման 2017թ. փետրվար ամսին, իսկ 2018թ. ամփոփիչ ծրագրի նախագծի առաջին խմբագրությունը շահագրգիռ մարմինների հետ ընդհանրապես չի էլ համաձայնեցվել:

Պետական ստանդարտացման 2017թ. և 2018թ. ծրագրերը ՀՀ կառավարության կողմից չեն հաստատվել, քանի որ ստանդարտացման լիազորված մարմնի կողմից ՀՀ կառավարության հաստատմանը չեն ներկայացվել: Ծրագրերը հաստատվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամաններով²⁴՝ հիմք ընդունելով պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշումները²⁵: Մինչդեռ ոչ միայն ստանդարտացման մասին ՀՀ օրենսդրությամբ, այլև դրանից բխող մնացած ենթաօրենսդրական ակտերը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի համար նման լիազորություն չեն սահմանել: Հարկ է նշել, որ տվյալ պարագայում, որոշակի հակասություններ է առաջանում ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Միևնույն ժամանակ, 2017թ. ծրագրում կատարվել է ստանդարտի փոփոխություն²⁶, որը նույնպես հաստատվել է նախարարի կողմից²⁷:

Արդյունքում՝ 2017թ. ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը որպես այդպիսին հաստատվել է 2017թ. ապրիլի 21-ին, իսկ 2018թ. ծրագիրը՝ 2018թ. փետրվարի 15-ին, իսկ դրամաշնորհի պայմանագրերը կնքվել են համապատասխանաբար՝ 2017թ. մայիսի 17-ին և 2018թ. մարտի 16-ին:

²⁴ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 21.04.2017թ. թիվ 395-Ա և 15.02.2018թ. թիվ 117-Ա հրամաններ

²⁵ ՀՀ կառավարության 29.12.2016թ. թիվ 1313-Ն և 28.12.2017թ. թիվ 1717-Ն որոշումների 13-րդ կետի 2-րդ ենթակետ

²⁶ ԵՆ 15316-4-2:2008 եվրոպական ստանդարտին ներդաշնակ ստանդարտի մշակումը փոխարինվել է ՀՍ-393-2017 ազգային ստանդարտով

²⁷ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 10.07.2017թ. 633-Ա հրաման

Այսպիսով, 2017թ. և 2018թ. պետական ստանդարտացման ծրագրերի պլանավորման աշխատանքները ժամանակին չեն կատարվել և չեն հաստատվել ՀՀ կառավարության կողմից:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017-2018թթ. ընթացքում ստանդարտացման ամենամյա ծրագրի կազմման գործընթացում առկա են բազմաթիվ թերություններ, քանի որ.

- 1. Ստանդարտացման ամենամյա ծրագիր չի մշակվել և չի հրապարակվել,*
- 2. Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրի պլանավորումը ժամանակին չի իրականացվել,*
- 3. 2017թ. ծրագրի նախագիծը շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել է ժամկետից ուշ, իսկ 2018թ. ծրագիրը ընդհանրապես չի համաձայնեցվել,*
- 4. Պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը հաստատվել է ոչ թե Կառավարության, այլ՝ պաշտոնապար անձի կողմից, ով նման իրավասություն չի ունեցել:*

3.2 Ստանդարտների մշակման պահանջի ձևավորումը

Պետական ստանդարտացման ծրագրերը կազմելու համար 2017թ. թվով 8, իսկ 2018թ. թվով 10 պետական կառավարման մարմիններ ներկայացրել են ստանդարտների մշակման առաջարկություններ (Հավելված 1 և 2):

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ներկայացված առաջարկները պարունակել են կրկնվող կամ նախկինում արդեն մշակված և ներկայումս գործող ստանդարտների մշակման առաջարկություններ, ինչպես նաև բազմաթիվ դեպքերում բացակայել են առաջարկվող ստանդարտների անհրաժեշտության հիմնավորումները (Հավելված 1, 2):

Ավելին, 2017-2018թթ. պետական կառավարման մարմինների կողմից միայն ՀՀ-ում արտադրվող արտադրատեսակների համար ազգային ստանդարտների մշակման ենթակա թեմաներ չեն առաջարկվել, որոնց կիրառումը կոչված էր աջակցել արտահանմանը և մրցունակության բարձրացմանը արտաքին շուկայում, ինչպես նաև ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման ապահովմանը²⁸:

Ստորև ներկայացվել է այն պետական կառավարման մարմինների ցանկը, որոնք պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ ստանդարտների մշակման վերաբերյալ առաջարկություններ չունեն:

²⁸ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 21.04.2017թ. թիվ 395-Ա և 15.02.2018թ. թիվ 117-Ա հրամաններով հաստատված 2017թ և 2018թ. ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիր

**Աղյուսակ 3. Ստանդարտների մշակման վերաբերյալ առաջարկություններ
չներկայացրած նախարարություններ**

2017թ.	2018թ.
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	

Ինչպես երևում է աղյուսակից, 2017թ. և 2018թ. համապատասխանաբար թվով 6 և 5 գերատեսչություններ պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ ստանդարտների մշակման վերաբերյալ առաջարկություններ չունեն:

2017թ. համար ներկայացված առաջարկություններից պետական կառավարման մարմինների միայն 57%-ը, իսկ 2018թ.՝ 67%-ն է ստանդարտների մշակման պահանջ ներկայացրել:

Պետական կառավարման մարմինները, որոնք պահանջ են ներկայացրել մշակելու ստանդարտներ՝

- *հիմնականում պահանջել են կրկնվող և արդեն գործող, ոչ թե նոր ստանդարտներ,*
- *հայրենական արտադրանքի խթանման համար ստանդարտների պահանջ չի ներկայացվել:*

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ չնայած ստանդարտացման աշխատանքների պլանավորման գործընթացը ՍԱԻ-ի կողմից ժամանակին և ամբողջությամբ չի կազմակերպվել, սակայն 2017-2018թթ. ընթացքում պետական կառավարման մարմինները նույնպես ստանդարտացման գործընթացի նկատմամբ հեղափոխություն չեն ցուցաբերել:

3.3 Ստանդարտների ընդգրկվածությունը

2017թ. ստանդարտների մշակման ծրագրում ընդգրկվել է 55, իսկ 2018թ.՝ 30 ազգային ստանդարտի մշակման և վերանայման աշխատանքներ: 2017թ. և 2018թ. ծրագրերով հաստատված ստանդարտացման աշխատանքները ներկայացվել են ստորև.

Աղյուսակ 4. Ծրագրերով հաստատված ստանդարտացման աշխատանքներ

Աշխատանքների անվանումները	2017թ.	2018թ.
Ռազմական ազգային ստանդարտի մշակում	4	9
Ազգային ստանդարտի մշակում	6	6
Ազգային ստանդարտի վերանայում	1	1
Ազգային ստանդարտի մշակում միջազգային ստանդարտին ներդաշնակ	42	12
Ազգային ստանդարտի վերանայում միջազգային ստանդարտին ներդաշնակ	2	2
ԸՆԴԱՄԵՆԸ	55	30

2017թ. գերատեսչությունների կողմից ՍԱԻ-ն ստացել է ընդհանուր թվով 190 ստանդարտի մշակման առաջարկություն, որից 67-ը եղել է կրկնվող, նախկինում մշակված և արդեն գործող կամ ԳՕՍՏ և ԳՕՍՏ Ռ ստանդարտներ, որոնք ՀՀ-ում գործում են կամ սահմանված կարգով կարելի է գործողության մեջ դնել առանց մշակման: Ստացված առաջարկությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ 2017թ. համար պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված իրական պահանջը կազմել է 123 ստանդարտ, որից 2017թ. ծրագրում ընդգրկվել է ընդամենը 33-ը:

Ինչ վերաբերվում է 2018թ., ապա ներկայացվել է թվով 164 առաջարկություն, որից առանձնացնելով ԳՕՍՏ, ԳՕՍՏ Ռ, կրկնվող, նախկինում մշակված և արդեն գործող թվով 61 ստանդարտները, իրական պահանջը կազմել է 103 ստանդարտ, որից 2018թ. ծրագրում ընդգրկվել է ընդամենը 23-ը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից երկու տարի շարունակ առաջարկված ԳՕՍՏ և ԳՕՍՏ Ռ ստանդարտներին համապատասխան ընթացք չի տրվել, որոնք գործողության մեջ դնելու համար ստանդարտի մշակման աշխատանք չէր պահանջվում:

ՍԱԻ-ի դիրքորոշում – 2017թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկվել է 47 ստանդարտ (չհաշված ԻՍՕ ստանդարտները) ձեռք բերել և ոչ ընդունել: Ստանդարտներից 33-ը՝ միջպետական են (ԳՕՍՏ) և 14-ը՝ Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ): Միջպետական ստանդարտներից 31-ը գործում է Հայաստանի Հանրապետությունում: 2018 թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկվել է 43 ստանդարտ (չհաշված ԻՍՕ ստանդարտները), որից 29-ը՝ միջպետական (ԳՕՍՏ) և 14-ը Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) ստանդարտ: Միջպետական ստանդարտներից 27-ը գործում է Հայաստանի Հանրապետությունում: 2017 և 2018թթ. առաջարկված կրկնվող 2 միջպետական ստանդարտներին Հայաստանը չի միացել և գործողության մեջ չի դրվել, քանի որ առանձին հիմնավորում չի տրվել: ՌԴ ստանդարտները ՀՀ-ում գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ստանդարտի համար շահագրգիռ կողմերի հիմնավորում:

Հաշվեքննողի արձագանք – Ընդունվել է ի գիտություն, սակայն 2017-2018թթ. ըստ ՍԱԻ-ի ելից փաստաթղթերի տվյալների ՀՀ առողջապահության նախարարությանը վերոգրյալի մասին պատշաճ ձևով չի տեղեկացվել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ պետական կառավարման մարմինների կողմից առաջարկված թեմաները ստանդարտացման ծրագրում ընդգրկվել են մասամբ: Մասնավորապես, 2017թ. գերատեսչությունների կողմից ներկայացված իրական պահանջի շուրջ 27%-ն է ընդգրկվել ամենամյա ծրագրում, իսկ 2018թ.՝ 22%-ը:

2017-2018թթ. ծրագրերով նախատեսվել է մշակել ազգային ստանդարտներ՝ տնտեսության հետևյալ ոլորտների համար.

Աղյուսակ 5: Մշակվող ստանդարտների քանակը ըստ տնտեսության ոլորտների

	2017թ.	2018թ.
Ռազմարդյունաբերություն	4	9
Էներգետիկա	2	2
Շինարարություն և շինանյութերի արտադրություն	3	5
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	1	1
Տրանսպորտ	3	1
Նավթամթերք	3	-
Սննդամթերքի արտադրություն	35	6
Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ	2	-
Կառավարման համակարգեր	1	3
Առողջապահություն	1	3
ԸՆԴԱՄԵՆԸ	55	30

Աղյուսակ 5-ի ցուցանիշները դիտարկելով աղյուսակ 2-ում բերված (2017թ.՝ 8,800.8 հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 8,242.8 հազ. դրամ) պետական ֆինանսավորման գումարների հետ, ակնհայտ է դառնում, որ թվային առումով համադրելի ֆինանսավորման դեպքում 2018թ.-ին պլանավորվել է 25 հատով պակաս ստանդարտի մշակում: ՍԱԻ-ն չի կարողացել հիմնավորել այդ տարբերությունը, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատին չի տրամադրվել ըստ յուրաքանչյուր պլանավորված ստանդարտի ծախսերի հաշվարկները (կամ նախահաշիվները):

Ծրագրի ընտրությունը պետք է կատարվեր ՀՀ կառավարության կողմից հոչակված տնտեսական գերակայությունների, տնտեսական քաղաքականության, սահմանված պետական ծրագրերի իրականացման և միջազգային համաձայնագրերով ստանձնած ՀՀ պարտավորություններից բխող պահանջներով²⁹, սակայն վերոնշյալ սկզբունքները ոչ միշտ են պահպանվել (Հավելված 3 և Հավելված 4): ՍԱԻ-ն չի մշակել պետական ստանդարտացման ամենամյա ծրագրերում ստանդարտների ընդգրկման համար մեթոդաբանություն: Արդյունքում, պարզ չէ, թե առաջարկվող ստանդարտների հիմնավորումների բացակայության պարագայում³⁰, ինչպես է կատարվել ստանդարտների ընտրությունը և ինչ չափանիշ է կիրառվել ստանդարտների առաջնահերթությունը որոշելիս: Այս հանգամանքը, ինչպես պարզվել է հաշվեքննության ընթացքում, էապես ազդել է ստանդարտների ընտրության գործընթացը արդյունավետ կազմակերպելու վրա:

Ընտրության չափանիշների բացակայությունը իր հետևանքներն է ունեցել 2017-2018թթ. ստանդարտների մշակման գործընթացում, ինչի մասին հավաստում են հետևյալ օրինակները՝

²⁹ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 21.04.2017թ. թիվ 395-Ա և 15.02.2018թ. թիվ 117-Ա հրամաններով հաստատված 2017թ և 2018թ. ստանդարտների մշակման ծառայությունների ծրագրի 5-րդ կետ

³⁰ Տես՝ Հավելված 3 և Հավելված 4

1. Պետական ստանդարտացման 2017թ. և 2018թ. ծրագրերում ընդգրկված ստանդարտներից ոչ բոլորն են ընտրվել ՀՀ պետական կառավարման մարմինների առաջարկությունների հիման վրա: Մասնավորապես՝ բացակայել է հիմնավորումը, թե որ մարմինն է ներկայացրել 2017թ. ընտրված 55 ստանդարտներից թվով 22-ի, իսկ 2018թ.՝ ընտրված 30 ստանդարտներից թվով 7-ի պահանջը:
2. Պետական ստանդարտացման 2017թ. ծրագրում ՀՀ գյուղատնտեսության նախարարության պահանջով ընդգրկվել է թվով երկու ազգային ստանդարտի մշակման աշխատանքներ³¹, այնինչ վերջիններս 2010թ. և 2011թ. արդեն իսկ մշակված են եղել³²: 2017թ. ծրագրում ներառվելու արդյունքում վերոնշյալ ստանդարտները որևէ փոփոխության, վերանայման կամ լրամշակման չեն ենթարկվել, և 2017թ. նորից հաստատվել են ամբողջապես նույն բովանդակությամբ: Այսինքն ՍԱԻ-ում զբաղվել են այնպիսի ստանդարտների մշակմամբ, որը տվյալ պահին եղել է գործող: Վերոնշյալ 2 ստանդարտների, որպես այդպիսին, մշակման համար ՍԱԻ-ն պետական դրամաշնորհի շրջանակներում ստացել է 137.0 հազ. դրամ:
3. Պետական ստանդարտացման 2017թ. ծրագրում ՀՀ գյուղատնտեսության նախարարության պահանջով ներառվել է այնպիսի ստանդարտի մշակման աշխատանքներ³³, որը 2013թ. հավանության մեթոդով ընդունված և դրված է եղել գործողության մեջ, իսկ 2017թ.-ին միայն թարգմանվել է հայերեն, որի համար դրամաշնորհի շրջանակներում հատկացվել է 27.4 հազ. դրամ:
4. 2017թ. իրականացվել է ՀՍ 238-2004 «Վառելիք վառարանային կենցաղային. Տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ» ստանդարտի թիվ 2 փոփոխությունը, սակայն բացակայել է հիմնավորումը, թե ում առաջարկության հիման վրա է կատարվել վերոնշյալ փոփոխությունը:
5. 2018թ. ծրագրում ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պահանջով ներառվել է այնպիսի ստանդարտի մշակման աշխատանքներ³⁴, որը 2014թ.-ին արդեն մշակվել և գործողության մեջ է դրվել, իսկ 2018թ.-ին իրականացվել են միայն խմբագրական աշխատանքներ, որի համար դրամաշնորհի շրջանակներում հատկացվել է 80.2 հազ. դրամ:
6. Պետական ստանդարտացման 2018թ. ծրագրում, առանց որևէ պետական կառավարման մարմնի կողմից ներկայացված պահանջի, ներառվել է թվով 2 ստանդարտի մշակման աշխատանքներ³⁵, որոնք արդեն իսկ 2017թ.-ին

³¹ ԻՍՕ 6561-2:2005 ստանդարտին ներդաշնակ ՀՍ ԻՍՕ 6561-2:2017 ազգային ստանդարտի մշակման և ԻՍՕ 13496:2000 ստանդարտին ներդաշնակ ՀՍ ԻՍՕ 13496:2017 ազգային ստանդարտի մշակման աշխատանքներ

³² 2010թ.-ին ԻՍՕ 6561-2:2005 ստանդարտին ներդաշնակ արդեն իսկ մշակվել է ՀՍ ԻՍՕ 6561-2:2010 ազգային ստանդարտը, իսկ 2011թ.-ին՝ ԻՍՕ 13496:2000 ստանդարտին ներդաշնակ ՀՍ ԻՍՕ 13496:2011 ազգային ստանդարտը:

³³ ԻՍՕ 6463:1982 ստանդարտին ներդաշնակ ՀՍ ԻՍՕ 6463:2017 ազգային ստանդարտի մշակման աշխատանքներ

³⁴ ԻՍՕ 1920-10:2010 ստանդարտին ներդաշնակ ՀՍ ԻՍՕ 1920-10:2018 ազգային ստանդարտի մշակման աշխատանքներ

³⁵ ՀՍ ԻՍՕ 10467:2018 և ՀՍ ԻՍՕ 10639:2018 ազգային ստանդարտի մշակման աշխատանքներ

հավանության մեթոդով ընդունված և դրված են եղել գործողության մեջ³⁶, իսկ 2018թ.-ին միայն թարգմանվել են հայերեն, որոնց համար դրամաշնորհի շրջանակներում հատկացվել է 481.1 հազ. դրամ:

7. Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրում ստանդարտների ընտրության ոչ արդյունավետ կազմակերպման մեկ այլ օրինակ է հանդիսանում 2018թ. ծրագրում ներառված երկու ստանդարտների մշակումը³⁷, որոնք հաստատվել են 20.12.2018թ.-ին և 27.12.2018թ.-ին, սակայն պայմանավորված ԵԱՏՄ միասնական կանոնակարգերի ուժի մեջ մտնելով, ընդամենը համապատասխանաբար՝ 4 և 9 ամիս անց դադարեցվել է դրանց գործողությունը և փոխարինվել են միջպետական ստանդարտներով³⁸, որոնք հաստատվել են 26.04.2019թ. և 25.09.2019թ.:
8. Ռազմական արտադրանքի ստանդարտացման աշխատանքների ամենամյա ծրագիր³⁹ ՍԱԻ-ի կողմից չի կազմվել, իսկ պետական ստանդարտացման ամենամյա ծրագրում ռազմարդյունաբերության ոլորտի ստանդարտների ներառելու ընթացակարգը հստակեցված չի եղել: Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից առաջարկված բոլոր ստանդարտները ամբողջությամբ ներառվել են ստանդարտացման ամենամյա ծրագրում: Ստանդարտների ընտրության այս առաջնահերթությունը որևէ մեթոդական ցուցումով սահմանված չի եղել (2017թ. մշակվել է թվով 4, 2018թ.՝ թվով 9 ստանդարտներ), ընդ որում վերոնշյալ ստանդարտների գործողության ժամկետները սահմանվել է 2020թ. հունվարի 1-ը:

ՍԱԻ-ի դիրքորոշում - ՀՀ պաշտպանության նախարարության կողմից առաջարկված բոլոր ստանդարտներն ընդգրկվել են ստանդարտացման պետական ամենամյա ծրագրում, քանի որ 2013-2016 թթ. ռազմարդյունաբերության ոլորտի ստանդարտների մշակումը պետական ամենամյա ծրագրերով պայմանավորված է եղել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Ռազմարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ տեխնիկական ակտերի ցանկը հաստատելու մասին» N 1291-Ն և ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի «Ռազմարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ տեխնիկական ակտերի մշակման ծրագիրը հաստատելու մասին» N 1255-Ա որոշումներով: 2017-2018 թթ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից առաջարկված ռազմարդյունաբերության ոլորտի բոլոր ստանդարտներն ընդգրկվել են պետական ամենամյա ծրագրերում՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Ռազմական արդյունաբերության արտադրանքի ազգային ստանդարտների մշակման, ընդունման եվ կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 120-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 622-Ն որոշմամբ հաստատված «Ռազմական արդյունաբերության արտադրանքի ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կիրառման» կարգի 5-րդ բաժնի 24 և 25 կետերով:

Հաշվեքննողի արձագանք - Ընդունվել է մասնակի: Հաշվի առնելով նշված ոլորտի առանձնահատկությունները եզրակացությունում կատարվել է համապատասխան խմբագրում:

³⁶ Ստանդարտները մշակվել են 10.10.2017թ. պայմանագրով «Ջի Ար ՓԻ Սիսթեմս» ՓԲԸ-ի պատվերով:

³⁷ ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011:2018 և ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025:2018 ստանդարտների մշակում

³⁸ ԳՕՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011:2018 և ԳՕՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025:2018 ստանդարտներ

³⁹ ՀՀ կառավարության 13.06.2013թ. 622-Ն որոշում

9. Պետական ստանդարտացման 2017թ. ծրագրում կատարվել է ստանդարտի փոփոխություն⁴⁰, որի արդյունքում ոչ թե փոխարինվել է ծրագրում առանց հիմնավորման ներառված ստանդարտներից մեկը, այլ՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից պահանջված ստանդարտը:

Սահմանափակ ռեսուրսների պարզառով ՍԱԻ-ն կարող է յուրաքանչյուր փարի մշակել միայն սահմանափակ թվով ստանդարտներ: Այնուամենայնիվ, ՍԱԻ-ն չունի ստանդարտների ընտրության համար հստակ սահմանված չափանիշներով մեթոդաբանություն, որի արդյունքում պետության համար մշակվում են ստանդարտներ, որոնք արդեն գործում են կամ դրանցում կատարվում են ընդամենը խմբագրական աշխատանքներ: Պետական ստանդարտացման 2017թ. ընդգրկված թվով 22, իսկ 2018թ. թվով 7 ստանդարտների պահանջը պետական կառավարման մարմինների կողմից չի ներկայացվել: Ծրագրերում այս շեղումների հիմնավորումները ՍԱԻ-ի կողմից չի ներկայացվել:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ ստանդարտների ընտրության գործընթացում առկա են թերություններ և ռեսուրսների անարդյունավետ օգտագործման ռիսկեր:

⁴⁰ ԵՆ 15316-4.2:2008 եվրոպական ստանդարտին ներդաշնակ ազգային ստանդարտի մշակումը փոխարինվել է ՀՍ-393-2017 ազգային ստանդարտով

4. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝

- Ստանդարտի նախագծի առաջին և երկրորդ խմբագրության կազմման և հանրային քննարկման գործընթացը,
- Ստանդարտների նորացման աշխատանքների կազմակերպման գործընթացը,
- Ստանդարտի նախագծի վերջնական ընդունումը տեխնիկական հանձնաժողովների կամ աշխատանքային խմբերի կողմից,
- ՍԱԻ կողմից ստանդարտների ընդունումը և գործողության մեջ դնելը,
- Ազգային ֆոնդի արդիականացման և տեղեկատվական սպասարկման աշխատանքները:

Օրենքի⁴¹ համաձայն՝ ազգային ստանդարտների մշակումը ներառում է հետևյալ փուլերը.

1. ստանդարտի նախագծի և (կամ) մշակման առաջարկի ներկայացում Ստանդարտացման ազգային մարմին.
2. ստանդարտի մշակման գործընթացի կազմակերպում տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի միջոցով.
3. նախագծի առաջին խմբագրության մշակում և դրա հրապարակային քննարկում.
4. ազգային ստանդարտի նախագծի երկրորդ խմբագրության հրապարակային քննարկում.
5. ստանդարտի վերջնական նախագծի ընդունում տեխնիկական հանձնաժողովի (աշխատանքային խմբի) կողմից.
6. ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության հիման վրա ստանդարտի ընդունում և հրապարակում:

Ռազմական արդյունաբերության արտադրանքի (աշխատանքի, ծառայության) վերաբերյալ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման հաստատման և կիրառման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության որոշմամբ⁴²:

4.1 Առաջին և երկրորդ խմբագրության կազմումը և հրապարակային քննարկումը

Ստանդարտի նախագիծը նախապատրաստում է տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը⁴³: Ստանդարտի նախագծի մշակումն ավարտվում է տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կողմից ստանդարտի նախագիծը պարզաբանման հետ միասին ներկայացնելով ՍԱԻ՝ ինտերնետային

⁴¹ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 17-րդ հոդվածի 2-րդ մաս

⁴² ՀՀ կառավարության 06.07.2013թ. թիվ 622-Ն որոշմամբ

⁴³ Համաձայն ՀՍ 1.2-2013 հիմնադրության ստանդարտի

կայքում (www.sarm.am) տեղադրելու և հրապարակային քննարկման համար: Ստանդարտի նախագծի առաջին խմբագրության վերաբերյալ դիտողությունները և առաջարկություններն ուղարկվում են ստանդարտի նախագիծը հրապարակային քննարկման դնելու օրվանից 60 օրվա ընթացքում, եթե մշակողի կողմից այլ ժամկետ չի սահմանվել:

Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը ստանդարտի լրամշակված նախագծի հրապարակային քննարկման արդյունքների հիման վրա նախապատրաստում է ստանդարտի նախագծի վերջնական (երկրորդ) խմբագրությունը: Ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման ավարտի մասին ծանուցման հրապարակման օրվանից հետո ստանդարտի նախագծի վերջնական խմբագրությունը և շահագրգիռ մարմիններից ստանդարտի նախագծի առաջին խմբագրության վերաբերյալ ստացված գրավոր կամ էլեկտրոնային տեսքով դիտողություններն ու առաջարկությունները՝ ներառված կարծիքների ամփոփագրում, ինչպես նաև լրամշակված պարզաբանումը պետք է տեղադրվեն ՍԱԻ-ի ինտերնետային կայքում:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ նախագծի առաջին և երկրորդ խմբագրությունների մշակումը իրականացնում է ՍԱԻ-ի Ստանդարտացման բաժնի աշխատակիցների կողմից, ովքեր ընդգրկված են եղել ՏՀ կամ աշխատանքային խմբերի կազմում: Նախագծերի առաջին և երկրորդ խմբագրությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները չեն փաստաթղթավորվել, ինչը հնարավորություն չի տվել գնահատել ստանդարտների մշակման գործընթացում շահագրգիռ մարմինների հետաքրքրությունը և ցուցաբերված մասնակցությունը:

ՍԱԻ-ի ինտերնետային կայքում 2017-2018թթ. ստանդարտների նախագծերի առաջին և երկրորդ խմբագրությունները չեն պահպանվել, սակայն ուսումնասիրելով ընթացիկ տարվա ստանդարտների նախագծերի խմբագրությունները, պարզվել է, որ ստանդարտների նախագծերի պարզաբանումները, կարծիքների ամփոփագրերը բացակայել են և չի նշվել, թե քանի օր է հատկացվել հրապարակային քննարկման համար, ում և ինչ ժամկետներում կարող էին շահագրգիռ անձինք ուղարկել դիտողություններն ու առաջարկությունները:

Եթե ստանդարտի նախագիծը նույնական է միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտին կամ ձևափոխված է դրա նկատմամբ, ապա տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը գնահատում է ներդաշնակեցման տվյալ ձևի ընտրության հիմնավորումը⁴⁴: Պետական ստանդարտացման 2017թ. և 2018թ. ծրագրերում ընդգրկված միջազգային ստանդարտներին ներդաշնակ բոլոր ազգային ստանդարտները մշակվել են թարգմանության եղանակով՝ համապատասխանության աստիճանը նույնական է միջազգային և եվրոպական

⁴⁴ Համաձայն ՀՍ 1.2-2013 հիմնադրությային ստանդարտի

ստանդարտների հետ, սակայն ընդունման մեթոդի ընտրության (հավանության կամ վերահրատարակման) հիմնավորումը բացակայել է:

Տեխնիկայի զարգացման մակարդակին և գիտատեխնիկական առաջընթացին մշակվող ստանդարտի համապատասխանությունը ստուգելու նպատակով⁴⁵ անհրաժեշտ է իրականացնել ստանդարտի նախագծի փորձաքննություն և գիտատեխնիկական մակարդակի գնահատում: Փորձաքննության ժամանակ իրականացվում է գիտատեխնիկական մակարդակի գնահատում, տեխնիկական, չափագիտության, տերմինաբանական և իրավական փորձաքննություններ: Փորձաքննության արդյունքները ձևակերպվում են ստանդարտին կից պարզաբանման տեղեկագրում: Սակայն, 2017-2018թթ. ոչ միայն փորձաքննության արդյունքները չեն արտացոլվել պարզաբանման տեղեկագրում, այլև բացակայում է նաև պարզաբանման տեղեկագիրը:

ՍԱԽ-ի դիրքորոշում (1)- Ըստ ՀՍ 1.2-2013 և ՀՍ 1.8-98 ստանդարտների համաձայն ստանդարտի նախագծի փորձաքննության և գիտատեխնիկական մակարդակի գնահատման համար անհրաժեշտ են հավելյալ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ՝ գիտատեխնիկական փորձաքննություն իրականացնելու համար, քանի որ ստանդարտի մշակման աշխատանքներին մասնակցությունը կամավոր է, աշխատանքները չեն վարձատրվում, ուստի գիտատեխնիկական ներուժի ներգրավվումը շատ բարդ է:

Հաշվեքննողի արձագանք (1)- Չի ընդունվել, քանի որ ֆինանսավորման խնդրի առկայության դեպքում, անհրաժեշտ էր այդ մասին տեղեկացնել ստանդարտացման քաղաքականությունն իրականացնող լիազորված մարմնին:

ՍԱԽ-ի դիրքորոշում (2) - Համաձայն ՀՍ 1.2-2013 ստանդարտի՝ պարզաբանումը հանձնարարելի է և ոչ պարտադիր:

Հաշվեքննողի արձագանք (2) - Ընդունվել է մասնակի, քանի որ, թեև համաձայն հիմնադրությաին ստանդարտի պարզաբանման տեղեկագիրը պարտադիր չէ, սակայն փորձաքննության արդյունքները ենթակա են պարտադիր ձևակերպման:

Առաջին և երկրորդ խմբագրությունների կազմման գործընթացում արձանագրվել են հետևյալ խեղաթյուրումները՝

- Նախագծերի վերաբերյալ ստացված դիմումություններն ու առաջարկությունները չեն փաստաթղթավորվել,*
- ՍԱԽ-ի ինտերնետային կայքում չի հրապարակվել շահագրգիռ կողմերի համար առաջարկություններ և դիմումություններ ներկայացնելու վերջնաժամկետները,*
- Միջազգային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների ընդունման մեթոդի հիմնավորումը բացակայել է,*
- Ստանդարտների նախագծի մշակման ընթացքում փորձաքննություններ չեն կատարվել:*

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ ստանդարտների նախագծի մշակման գործընթացը ունի թերություններ և թափանցիկ չէ: Հերևաբար մշակված ստանդարտների որակը երաշխավորված չէ:

⁴⁵ Համաձայն ՀՍ 1.2-2013 և ՀՍ 1.8-98 հիմնադրությաին ստանդարտների

4.2 Ստանդարտների նորացման աշխատանքների կազմակերպումը

Գործող ստանդարտների նորացումը իրականացվում է դրա վերանայման, ստանդարտի փոփոխության մշակման, իսկ բացառիկ դեպքերում (վրիպակների, սխալների կամ այլ անճշտությունների առկայության դեպքում)՝ ստանդարտում ուղղումներ կատարելու միջոցով⁴⁶: Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը քննարկում, վերլուծում և ընդհանրացնում է ստանդարտի վերանայման վերաբերյալ ստացված առաջարկությունները, գնահատում է դրանց արդիականությունը, որոշում է նորացման ձևը (վերանայում կամ փոփոխություն):

Եթե ստանդարտի հաստատումից հետո հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտի տեխնիկական հանձնաժողովի կողմից ստանդարտի նորացման վերաբերյալ առաջարկություններ չեն ստացվել, ապա տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը պետք է իրականացնի տվյալ ստանդարտի ստուգումը կամ պետք է տեխնիկական հանձնաժողովի անդամներին, շահագրգիռ մարմիններին հարցում ուղարկի ստանդարտի ստուգման և առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ: Ստանդարտի ստուգումն իրականացնում են դրա նորացման անհրաժեշտության հայտնաբերման նպատակով, որը կարող է ուղղված լինել մշակվող տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանը, ՀՀ օրենսդրության գործող և գործարկման մեջ դրվող նորմերի հետ հակասության վերացմանը, նոր կնքված միջազգային համաձայնագրերին ստանդարտի համապատասխանեցմանը, միջազգային և (կամ) տարածաշրջանային մակարդակով ստանդարտի ներդաշնակեցմանը, նոր մշակվող, վերանայվող և փոփոխվող ՀՀ ստանդարտների, ՀՀ տարածքում որպես ազգային ստանդարտներ գործող միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտների հետ հակասության կամ կրկնության վերացմանը:

2017-2018թթ. բացակայել է ՀՍ 1.2-2013 հիմնադրությային ստանդարտի պահանջներին համապատասխան իրականացված ՀՍ դասիչով ստանդարտների նորացման աշխատանքների և/կամ տեխնիկական հանձնաժողովների կողմից նորացման առաջարկությունների վերաբերյալ փաստաթղթավորումը:

ՍԱԽ-ի դիրքորոշում (1) – Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրի ֆինանսավորման չափի անփոփոխ մնալու և համապատասխան լրացուցիչ մարդկային ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված հնարավոր չէ ստանդարտի հաստատումից հետո հինգ տարին մեկ ապահովել ՀՍ 1.2 ազգային ստանդարտի պահանջի կատարումը:

Հաշվեքննողի արձագանք (1) – Չի ընդունվել, քանի որ ֆինանսավորման խնդրի առկայության դեպքում, անհրաժեշտ էր այդ մասին տեղեկացնել ստանդարտացման քաղաքականությունն իրականացնող լիազորված մարմնին:

ՍԱԽ-ի դիրքորոշում (2) – 2017-2018 թվականներին վերանայվել և արդիականացվել են ստանդարտներ, մասնավորապես՝ ՀՍ ԻՍՕ 9000-2006 Որակի կառավարման համակարգեր. Հիմնական դրույթներ և բառարան, ՀՍ 185-2006 Օպերատիվ ծառայությունների ավտոմոբիլներ, ավտոբուսներ և մոտոցիկլներ. Գունագծապատկերներ, - ճանաչման նշաններ, մակագրություններ, լուսային և ձայնային հատուկ

⁴⁶ Համաձայն ՀՍ 1.2-2013 հիմնադրությային ստանդարտի

ազդանշաններ. Ընդհանուր պահանջներ, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2009 Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 Փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ: ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 և ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտները մշակվել են հավատարմագրման ոլորտի աշխատանքներն ապահովելու անհրաժեշտությունից: ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 և ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2018 ստանդարտները մշակվել և գործողության մեջ են դրվել ավելի վաղ քան ԳՕՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2019 և ԳՕՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 միջպետական ստանդարտների հրատարակումը:

Հաշվեքննողի արձագանք (2) – Չի ընդունվել, քանի որ ստանդարտների արդիականացման աշխատանքները կրել են ոչ համակարգային բնույթ, նորացվել են միայն պետական ստանդարտացման ծրագրում ընդգրկված ՀՍ դասիչով ստանդարտները:

ՍԱԻ-ի կողմից ստանդարտների նորացման աշխատանքների փաստաթղթավորված չլինելու պարզառով հնարավոր չի եղել տրամադրություն:

4.3 Տեխնիկական հանձնաժողովների կամ աշխատանքային խմբերի կողմից ստանդարտի նախագծի վերջնական ընդունում

Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը քննարկման արդյունքների հիման վրա լրամշակում է ստանդարտի նախագծի վերջնական տարբերակը⁴⁷, և ընդունում է որոշում նախագիծը ՍԱԻ ներկայացնելու մասին: Ընդունված որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:

ՀՀ-ում գործում են 26 տեխնիկական հանձնաժողովներ, որոնց կազմում⁴⁸ ստանդարտացման ոլորտում իրենց շահերի նյութականացման նպատակով հավասարության և կամավորության հիմունքներով ընդգրկվում են Ստանդարտացման ազգային մարմնի, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտահետազոտական ինստիտուտների, արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների (միությունների), ձեռնարկատերերի ու սպառողների միավորումների, առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ֆիզիկական անձինք:

Տեխնիկական հանձնաժողովի ստեղծումը, անդամակցությունը և ՏՀ կազմից դուրս գալն իրականացվում է Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով⁴⁹: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ բացակայել են ստեղծված ՏՀ աշխատանքային ծրագրերը և թվով 21 ՏՀ-ների հաստատված կանոնադրությունները (Հավելված 5): Ինչ վերաբերում է հանձնաժողովների կազմին, ապա այն հաստատվել է հիմնականում 2009-2015թթ. և դրանից հետո հանձնաժողովների կազմի որևէ փոփոխություն չի իրականացվել, նոր կազմ չի հաստատվել, ավելին թվով 10 հանձնաժողովների կազմ չի հաստատվել:

⁴⁷ Համաձայն ՀՍ 1.2-2013 հիմնադրությային ստանդարտի

⁴⁸ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս

⁴⁹ Համաձայն տեխնիկական հանձնաժողովների կանոնադրության

2017թ. ծրագրով նախատեսված ստանդարտները մշակվել են թվով 6 տեխնիկական հանձնաժողովների և թվով 2 աշխատանքային խմբերի կողմից, իսկ 2018թ.⁵⁰ թվով 8 տեխնիկական հանձնաժողովների և թվով 1 աշխատանքային խմբի կողմից (Հավելված 3, Հավելված 4 և Հավելված 5):

Տեխնիկական հանձնաժողովների կազմի ուսումնասիրությունից (Հավելված 5) պարզվել է, որ թվով 12 հանձնաժողովներում հիմնականում ընդգրկված են պետական հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավոր հատվածի ներգրավվածությունը մեծ չէ:

Տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի նիստերի առկա արձանագրությունների ուսումնասիրությունից հնարավոր չի եղել որոշել ՏՀ անդամների մասնակցության աստիճանը, քանի որ արձանագրությունները ստորագրել են ՏՀ նախագահը և հանձնաժողովի քարտուղարը, իսկ նիստի մասնակիցների ստորագրությունները չի փաստաթղթավորվել և հնարավոր չի եղել որոշել, թե ստանդարտի ընդունումը քանի հոգու փոխհամաձայնությամբ է եղել:

Հաշվեքննությամբ արձանագրվել են նաև (Հավելված 3, Հավելված 4) հետևյալ խեղաթյուրումները՝

1. Օրենքի⁵⁰ համաձայն՝ համապատասխան ոլորտում գործող տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում, ստանդարտի մշակման համար ստեղծվում է շահագրգիռ կողմերից բաղկացած աշխատանքային խումբ: 2017թ. թվով 5 ստանդարտների⁵¹ մշակման աշխատանքներում համապատասխան ոլորտների մասնագետներ ներգրավված չեն եղել, ստանդարտները մշակվել են «Ստանդարտացում» աշխատանքային խմբի կողմից, որի կազմում ներգրավված են եղել միայն ՍԱԻ-ի ստանդարտացման բաժնի աշխատակիցներ: Ավելին՝ ստանդարտի վերջնական նախագիծը համապատասխան ոլորտի մասնագետների հետ չի համաձայնեցվել:

Թվով 8 ստանդարտների⁵² նախագծերը, որոնք նույնպես մշակվել են «Ստանդարտացում» աշխատանքային խմբի կողմից, շահագրգիռ մարմիններին ուղարկվել են կարծիքի ստանդարտի ընդունումից հետո, իսկ հետագայում ստացված առաջարկություններն էլ ներառվել են հանձնաժողովի նիստի արձանագրություններում և արդեն ընդունված ստանդարտում: Ընդ որում, պարզ չէ, թե ավելի ուշ ներկայացված առաջարկություններն ինչպես են արտացոլվել ավելի վաղ հաստատված ստանդարտում:

2. Նույն պատկերն է արձանագրվել նաև տեխնիկական հանձնաժողովների կողմից 2017թ. մշակված թվով 14 ստանդարտների ընդունման գործընթացում՝ ստանդարտի նախագծերը շահագրգիռ մարմիններին ուղարկվել են կարծիքի ստանդարտի

⁵⁰ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի

⁵¹ ՀՍ ԵՆ 14706-2017, ՀՍ ԵՆ 16278-2017, ՀՍ ԻՍՕ 6561-2-2017, ՀՍ ԻՍՕ 1443-2017, ՀՍ ԻՍՕ 13496-2017

⁵² ՀՍ 388-2017, ՀՍ ԻՍՕ 15885-2017, ՀՍ ԻՍՕ 6463-2017, ՀՍ ԻՍՕ 15774-2017, ՀՍ ԻՍՕ 21033-2017, ՀՍ ԻՍՕ 6867-2017, ՀՍ ԵՆ 15510-2017, ՀՍ 389-2017

ընդունումից հետո, իսկ հետագայում ստացված առաջարկությունները ներառվել են հանձնաժողովի նիստի արձանագրություններում և ընդունված ստանդարտում:

3. 2017թ. մշակված թվով 3 ստանդարտներ⁵³ հաստատվել են 2017թ. դեկտեմբերի 5-ին⁵⁴, սակայն ստանդարտի ընդունման համար հիմք հանդիսացող ՏՀ նիստը տեղի է ունեցել 2018թ. փետրվարի 27-ին, ստանդարտն ընդունելուց շուրջ 3 ամիս հետո:

4. Նույն պատկերն է արձանագրվել նաև 2018թ.-ին՝ մշակված թվով 3 ստանդարտներ⁵⁵ հաստատվել են 2018թ. հունիսի 29-ին⁵⁶, սակայն ստանդարտի ընդունման համար հիմք հանդիսացող ՏՀ նիստը տեղի է ունեցել 2018թ. հուլիսի 6-ին, ստանդարտն ընդունելուց մեկ շաբաթ հետո:

ՍԱԻ-ի դիրքորոշում – ՀՍ 19.501-2018, ՀՍ 19.505-2018 և ՀՍ 3.1118-2018 ստանդարտների նախագծերը համաձայնեցված են եղել «Ռազմական արտադրանքի տեխնիկական հանձնաժողովի» անդամների հետ և վերջին խմբագրությունների վերաբերյալ նոր դիտողություններ և առաջարկություններ չեն ստացվել, ստանդարտների նախագծերը պատրաստ են եղել ընդունման: Քանի որ 2018 թվականի մարտի 16-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության միջև կնքված N 32-18 պայմանագրի համաձայն ՀՍ 19.501-2018, ՀՍ 19.505-2018 և ՀՍ 3.1118-2018 ստանդարտների մշակումը նախատեսված է եղել 2018թ. առաջին կիսամյակում և ստանդարտների նախագծերը պատրաստ էին ընդունման, ուստի ՀՀ ՊՆ հետ նախնական բանավոր պայմանավորվածության համաձայն ՀՍ 19.501-2018, ՀՍ 19.505-2018 և ՀՍ 3.1118-2018 ստանդարտները հաստատվել են 2018թ. հունիսի 29-ին Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրենի հրամանով, սակայն ստանդարտի ընդունման համար հիմք հանդիսացող ՏՀ նիստը տեղի է ունեցել 2018թ. հուլիսի 6-ին, քանի որ տեխնիկական հանձնաժողովի անդամներից մի քանիսը գտնվում էին արձակուրդում և հնարավոր չէր նիստի քվորում ապահովել: Ուստի, նիստը կայացել է որոշ ուշացումով, որպեսզի ապահովվի տեխնիկական հանձնաժողովի անդամների մեծամասնության մասնակցությունը:

Հաշվեքննողի արձագանք – Չի ընդունվել, քանի որ ներկայացված պարզաբանումը հիմնավոր չէ:

5. 2018թ. մշակված ՀՍ 185-2018 ստանդարտի ընդունման համար հիմք հանդիսացող ՏՀ նիստի արձանագրությունը բացակայում է:

6. 2017թ. և 2018թ. մշակված ստանդարտների փաթեթներում բացակայել են կարծիքների ամփոփագրերը:

7. Դրամաշնորհի պայմանագրերով⁵⁷ ստանդարտների մշակման աշխատանքների գնահատման չափանիշներ են սահմանվում ստանդարտների գործարկման վերաբերյալ ազգային մարմնի հրամանները: 2018թ. ծրագրով նախատեսված թվով 30 ստանդարտներից 8-ի⁵⁸ վերջնական նախագծերը տեխնիկական հանձնաժողովների և ՍԱԻ-ի տնօրենի կողմից ընդունվել են 2019թ. փետրվար ամսին (Հավելված 4), սակայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը վերոնշյալ թվով 8 ստանդարտների մշակման աշխատանքները համարել է ընդունված, որի համար դրամաշնորհի շրջանակներում հատկացվել է 1,727.4 հազ. դրամ:

⁵³ ՀՍ ԻՍՕ 6058-2017, ՀՍ ԻՍՕ 6332-2017, ՀՍ ԻՍՕ 10566-2017

⁵⁴ ՍԱԻ տնօրենի թիվ 79-Լ հրաման

⁵⁵ ՀՍ 19.501-2018, ՀՍ 19.505-2018, ՀՍ 3.1118-2018

⁵⁶ ՍԱԻ տնօրենի թիվ 42-Լ հրաման

⁵⁷ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՍԱԻ միջև կնքված 17.05.2017թ. թիվ 21-17 և 16.03.2018թ. թիվ 32-18 պայմանագրեր

⁵⁸ ՀՍ 403 -2018, ՀՍ 404-2018, ՀՍ ԻՍՕ 61000-6-2-2018, ՀՍ ԻՍՕ 1920-10-2018, ՀՍ ԻՍՕ 8990-2018, ՀՍ ԻՍՕ 8142-2018, ՀՍ ԻՍՕ 10467-2018, ՀՍ ԻՍՕ 10639-2018

2017-2018թթ. տեխնիկական հանձնաժողովների կողմից ստանդարտների նախագծերի ընդունման ընթացակարգերը կանոնակարգված չեն եղել:

- Տեխնիկական հանձնաժողովների կազմը 2015թ.-ից հետո չի վերանայվել,*
- Հանձնաժողովների անդամները հիմնականում եղել են պետական հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ,*
- Թվով 10 տեխնիկական հանձնաժողովների կազմ հաստատված չի եղել,*
- Ստանդարտները մշակվել են ՍԱԻ-ի աշխատակիցների կողմից, որոնք համապատասխան ոլորտների որակավորված մասնագետներ չեն եղել այս աշխատանքի կատարման համար,*
- Ստանդարտներն ընդունվել են առանց համապատասխան մարմինների կարծիքի կամ առանց ՏՀ նիստ գումարելու:*
- ՍԱԻ-ն վճարվել է այն աշխատանքների համար, որոնք ամբողջությամբ ավարտված չեն եղել:*

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ հաստատման գործընթացում նույնպես առկա են լուրջ թերություններ:

4.4 Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտների ընդունումը և գործողության մեջ դնելը

Օրենքի⁵⁹ համաձայն՝ ստանդարտացման ազգային մարմինը ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության հիման վրա ընդունում է ստանդարտը և հրապարակում: Սակայն, 2017-2018թթ. ստանդարտները հաստատվել և գործողության մեջ են դրվել ՍԱԻ-ի տնօրենի հրամանով՝ առանց ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության: Ավելին, տեխնիկական խորհուրդ առհասարակ ձևավորված չի եղել:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2017թ. ՍԱԻ-ի տնօրենի համապատասխան հրամաններով ընդունվել և գործողության մեջ են դրվել թվով 10 ստանդարտներ, որոնք սակայն փաստացի մշակված չեն եղել և ներկայումս բացակայում են: Վերջիններիս համար դրամաշնորհի շրջանակներում հատկացվել է 1,886.0 հազ. դրամ (Հավելված 3):

2017թ. և 2018թ. ստանդարտները ՍԱԻ-ի տնօրենի համապատասխան հրամաններով ընդունվել և գործողության մեջ են դրվել առանց տեխնիկական խորհրդի եզրակացության:

2017թ. ՍԱԻ-ի տնօրենի հրամաններով ընդունվել և գործողության մեջ են դրվել թվով 10 ստանդարտներ, որոնք առհասարակ գոյություն չեն ունեցել:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017թ. և 2018թ. ստանդարտների հաստատման և գործողության մեջ դնելու գործընթացում ՍԱԻ-ին չի պահպանել օրենքի պահանջները:

4.5 Ազգային ֆոնդի արդիականացման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ

⁵⁹ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ

պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ ու հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

ՀՀ ազգային ստանդարտների ֆոնդի գրանցամատյանում հաշվառվում են 1993 թվականից հետո ընդունված ստանդարտները: 31.12.2018թ. դրությամբ գործում են թվով 7 095 ստանդարտներ (Հավելված 6), որի մեջ ներառված չեն ընդունված և գործողության մեջ դրված ռազմական ստանդարտները, քանի որ դրանք հանդիսանում են գաղտնի փաստաթղթեր:

2017թ. և 2018թ. ազգային ֆոնդը փաստացի համալրված ստանդարտների քանակը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 6. 2017թ. և 2018թ. ազգային ֆոնդը համալրված ստանդարտների քանակը

Տարեթիվ	Ստանդարտ	Քանակ (հատ)
2017թ.	ՀՍ	44
	ԳՕՍ	417
2018թ.	ՀՍ	19
	ԳՕՍ	439

ՍԱԻ-ն անհրաժեշտության դեպքում կարող է իրականացնել գործող ստանդարտների ազգային ֆոնդի վերլուծություն⁶⁰՝ դրանում ընդգրկված ստանդարտների գիտատեխնիկական մակարդակի գնահատման միջոցով դրա նորացման նպատակով: Ստանդարտի վերլուծության արդյունքների հիման վրա նախապատրաստվում են առաջարկություններ՝ առանց նորացման դրա հետագա կիրառման նպատակահարմարության կամ այն նորացնելու կամ չեղյալ հայտարարելու մասին: Ինչպես նաև բոլոր ազգային ստանդարտները ենթակա են պարբերական վերանայման՝ դրանց շարունակական արդիականությունն ապահովելու համար:

Սակայն, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2017-2018թթ. ազգային ֆոնդի պարբերաբար վերլուծություն չի իրականացվել, իսկ մինչև 1993թ. մշակված և ներկայումս գործող ստանդարտները ֆոնդի գրանցամատյանում չեն հաշվառվում:

ՍԱԻ-ի դիրքորոշում - Ստանդարտների ազգային ֆոնդում պարբերաբար իրականացվում է վերլուծություն և ստանդարտների արդիականացում, փոփոխություններով համալրում: Օրինակ Ռուսաստանի Դաշնության ստանդարտները ամբողջությամբ վերանայվել են և միջպետական ստանդարտների առկայության դեպքում փոխարինվել: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերից բխող միջպետական ստանդարտները պարբերաբար վերանայվում են և փոխարինվում նոր արդիական ստանդարտներով: Մինչև 1993թ. մշակված և ներկայումս գործող ստանդարտները ֆոնդի Գրանցամատյանում չի սկզբանե չեն հաշվառվել անհրաժեշտ մարդկային ռեսուրսների բացակայության պատճառով: Հրատարակվող տարեկան տեղեկատվական թերթիկները 12 հատ են:

Հաշվեքննողի արձագանք - Ընդունվել է մասնակի, սակայն ազգային ֆոնդում վերանայվել են միայն միջպետական ստանդարտները, ֆոնդում առկա մնացած ստանդարտների վերաբերյալ պարբերական

⁶⁰ Համաձայն ՀՍ 1.2-2013 հիմնադրությամբ ստանդարտի

վերլուծություն չի իրականացվել: Ինչ վերաբերում է մինչև 1993թ. մշակված և ներկայումս գործող ստանդարտները գրանցամատյանում մարդկային ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված չհաշվառելուն, ապա բերված դիրքորոշումն ընդունելի չէ:

2017-2018թթ. տարեկան միջինը 32 բաժանորդների մատուցվել է խորհրդատվություն, իրականացվել է ազգային ստանդարտների կատալոգի, տարեկան թվով 4 եռամսյակային տեղեկատուի և 12 տեղեկատվական թերթիկների նախապատրաստման և հրատարակման աշխատանքներ:

ՍԱԻ-ի կողմից 2014-2018թթ. ընթացքում վաճառված և բաժանորդներին տրամադրված ստանդարտների քանակը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 7. Վաճառված և բաժանորդներին տրամադրված ստանդարտների ղինամիկան

Տարեթիվը	Վաճառված ստանդարտների քանակը	Բաժանորդներին տրամադրված ստանդարտների քանակը	ԸՆԴԱՄԵՆԸ
2014	135	302	437
2015	260	157	417
2016	195	183	378
2017	241	183	424
2018	183	95	278
ԸՆԴԱՄԵՆԸ	1014	920	1934

Ինչպես երևում է աղյուսակից 2018թ.-ին ցուցանիշները կտրուկ նվազել են, հատկապես բաժանորդներին տրամադրված ստանդարտների քանակները:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են պետական ստանդարտացման 2017-2018թթ. ծրագրերով մշակված ստանդարտների վաճառքները⁶¹ 2019թ. նոյեմբերի դրությամբ: 2017թ. ծրագրով ընտրված և մշակված 41 ստանդարտից վաճառվել է ընդամենը 3 (7%), իսկ 2018թ. ծրագրով ընտրված և մշակված 25 ստանդարտից՝ 6-ը (24%): Վաճառքների ցածր մակարդակը ևս փաստում է, որ պետական ամենամյա ծրագրերում ստանդարտների ընտրությունը հիմնավոր չի եղել:

ՍԱԻ-ի դիրքորոշում – Պետական ստանդարտացման ամենամյա ծրագրերով մշակվող ստանդարտների նպատակն է ՀՀ տնտեսության գերակա ճյուղերի զարգացումը և պայմանավորված է պետական գերատեսչությունների կողմից մշակվող ռազմավարություններով: Այդ իսկ պատճառով պետական ամենամյա ծրագրում ընդգրկված ազգային ստանդարտների մշակումը եկամուտի ապահովում չի ենթադրում և վաճառքի անհրաժեշտությամբ պայմանավորված չէ:

Հաշվեքննողի արձագանք – Չի ընդունվել, քանի որ ՀՀ տնտեսության գերակա ճյուղերի զարգացմանը միտված գործունեության արդյունքում մշակված ստանդարտները ցածր պահանջարկ ունեն, այսինքն ընտրված չեն արդիականության սկզբունքով:

⁶¹ Բացառությամբ 2017թ.՝ 4 ռազմական և 10 հաստատված, սակայն գոյություն չունեցող ստանդարտի և 2018թ.՝ 5 ռազմական ստանդարտի

- Ազգային ֆոնդում ներառված ստանդարտների պարբերաբար վերլուծություն չի կատարվել:
- Մինչև 1993թ. մշակված և ներկայումս գործող ստանդարտները ազգային ֆոնդի գրանցամատյանում չեն հաշվառվել:
- 2017-2018թթ. ընթացքում մշակված և վաճառված ստանդարտների ցուցանիշները ցածր են՝ 2019թ. նոյեմբերի դրությամբ վաճառվել է 2017թ. մշակված ստանդարտների 7%-ը, իսկ 2018թ.՝ 24.%-ը:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ ստանդարտների կիրառման նկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներին ցածր է, ինչը կարող է պայմանավորված լինել ստանդարտների պլանավորման, մշակման և հաստատման գործընթացներում առկա թերություններով:

5. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Եզրակացության այս բաժնում ներկայացվել է՝

- Ստանդարտացման բնագավառում լիազորված մարմնի գործառույթները,
- ՍԱԻ կառավարման խորհրդի լիազորությունները,
- Ստանդարտացման գործընթացի հսկողական մեխանիզմները

5.1 Ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը

Օրենքի⁶² համաձայն՝ ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը մշակում և ապահովում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ստանդարտացման ոլորտի իրավիճակի նկարագրությունը, հիմնական խնդիրները և զարգացման գերակայությունները ներկայացնող միակ ոչ կարճաժամկետ փաստաթուղթը հանդիսանում է ՀՀ կառավարության միջանաժամկետ ծախսային ծրագիրը, որով սակայն իրականացվելիք քաղաքականության և ոլորտի զարգացման տեսլականի մասին հստակ սահմանում չի տրվում:

Միաժամանակ, ոլորտի զարգացման տեսլականը արտացոլող փաստաթղթերից է նաև Ստանդարտացման ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները, որոնք պետք է հաստատվեն ՍԱԻ կառավարման խորհրդի կողմից: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2017-2018թթ. ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները առհասարակ չեն մշակվել և չեն հաստատվել:

5.2 Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհուրդը

Կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատվել է 23.10.2017թ.⁶³ և դրանից հետո կազմի որևէ փոփոխություն չի իրականացվել, նոր կազմ չի հաստատվել, ավելին՝ կազմում ներառված անձինք հաշվետու ժամանակահատվածում դադարել են լինել համապատասխան գերատեսչության աշխատակիցներ:

2017-2018թթ. խորհուրդը չի գործել, ինչի հետևանքով չի ապահովվել Օրենքով⁶⁴ խորհրդին վերապահված այնպիսի գործառույթների իրականացումը, ինչպիսիք են՝ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքների

⁶² «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ

⁶³ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 23.10.2017թ. թիվ 1003-Ա հրաման

⁶⁴ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մաս

քննարկումը, հաստատումը և հրապարակումը, ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատումը և հրապարակումը և այլն:

Օրենքով սահմանված գործառույթներից բացի, կառավարման խորհուրդը իրականացնում է նաև ընկերության կանոնադրական գործունեության նկատմամբ հսկողություն և մշտադիտարկում, որը, նույնպես չի կատարվել:

Չի գործել նաև ներքին և արտաքին աուդիտի մեխանիզմները: Նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից ՍԱԻ-ում 2017-2018թթ. ընթացքում ներքին աուդիտ չի իրականացվել: ՍԱԻ-ում ներքին աուդիտ իրականացվել է 2016թ.-ին, որը վերաբերվել է միայն ՍԱԻ-ի 2015-2016թթ. համակարգի գնահատմանը: Միաժամանակ, հաշվեքննության ենթակա ժամանակահատվածի համար ՍԱԻ-ի կողմից չի իրականացվել նաև ՍԱԻ-ի կանոնադրության 11-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված արտաքին աուդիտի գործընթաց:

ՍԱԻ-ի դիրքորոշում - Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 1-ին կետի ինչպես նաև «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ըկերության կանոնադրության 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ընկերությունը կարող է ներգրավել արտաքին աուդիտոր (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Ուստի թե՛ օրենքը, թե՛ կանոնադրությունը արտաքին աուդիտի իրականացման գործընթացի իմպերատիվ պահանջ չեն սահմանում՝ թողնելով դա ընկերության հայեցողությանը:

Հաշվեքննողի արձագանք - Ընդունվել է մասնակի, սակայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով ֆինանսական հաշվետվությունները հրապարակելուց առաջ աուդիտորական եզրակացությունը պարտադիր է:

Համաձայն ՍԱԻ-ի կանոնադրության⁶⁵ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է վերստուգող հանձնաժողովը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Սակայն, բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից վերստուգող հանձնաժողով 2017-2018թթ. չի ձևավորվել և ՍԱԻ-ի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել: Ավելին, չի պահպանվել նաև կանոնադրության⁶⁶ պահանջները, համաձայն որի՝ տարեկան հաշվեկշիռը հաստատվել է առանց ՍԱԻ-ի գործունեության տարեկան հաշվեկշռի և հաշվետվությունների ստուգման վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության:

5.3 Վերահսկողական մեխանիզմների բացակայության հետևանքները

Վերոնշյալ հսկողական մեխանիզմների բացակայությունը հանգեցրել է ստանդարտացման գործընթացում մի շարք խեղաթյուրումների: Մասնավորապես, ինչպես նշվել է եզրակացության 3-րդ և 4-րդ բաժիններում, 2017թ. համար բացակայել է ամենամյա ծրագրով հաստատված ընդհանուր թվով 10 ստանդարտներ, երկու ստանդարտ նախկինում եղել են մշակված, կրկնվել են և այլն: Միաժամանակ,

⁶⁵ ՍԱԻ կանոնադրության 11-րդ գլխի 1-ին և 2-րդ կետեր

⁶⁶ ՍԱԻ կանոնադրության 11-րդ գլխի 3-րդ կետ

այսօրինակ խնդիրները բացառելու համար նախատեսված է եղել նաև ընթացիկ հսկողական մեխանիզմներ, որոնք ևս փաստացի արդյունավետ չեն եղել: Մասնավորապես՝ պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի 3-րդ գլխի համաձայն նախատեսվել է մոնիթորինգի գործընթաց, որի համաձայն նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ: Սակայն, վերը ներկայացված 2017թ. և 2018թ. ստանդարտացման ծրագրի պլանավորման, մշակման և հաստատման գործընթացում արձանագրված բացթողումները փաստում են նաև պայմանագրով սահմանված մոնիթորինգի գործընթացի բացակայության կամ անարդյունավետության մասին: Ընդ որում, այս վերահսկողական մեխանիզմի բացակայությունը նպաստել է ոչ միայն ստանդարտների մշակման և հաստատման գործընթացում դիսկերի ի հայտ գալուն, այլև նույնիսկ պլանավորման փուլում, որի պատճառով ամենամյա ծրագրի մեջ հայտնվել են 2017թ. թվով 22, իսկ 2018թ. թվով 7 ստանդարտներ, որոնց նկատմամբ պետական կառավարման մարմինների կողմից որևէ պահանջ չի ներկայացվել:

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով սահմանված արդյունքների ընդունման համար գնահատման չափորոշիչները նույնպես ունեն թերություններ: Մասնավորապես՝ Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ազգային ստանդարտների մշակման աշխատանքները համարվում են կատարված, եթե առկա են ծրագրով նախատեսված ստանդարտների գործարկման վերաբերյալ ազգային մարմնի հրամանները, մինչդեռ ստանդարտների առկայության վերաբերյալ որևէ պահանջ չկա: Այս չափորոշիչի և վերահսկողական մեխանիզմի թերի կիրառումն էականորեն նպաստել է նման խեղաթյուրումների ի հայտ գալուն:

ՍԱԻ-ի կառավարման խորհրդի և նախարարության վերահսկողական մեխանիզմները 2017-2018թթ. լիարժեքորեն չեն գործել, մասնավորապես կառավարման խորհուրդը չի գործել 2017թ. հոկտեմբերից, իսկ նախարարությունը չի ձեռնարկել համապատասխան վերահսկողական միջոցառումներ:

Վերոնշյալը և եզրակացության 3-րդ և 4-րդ բաժիններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված խեղաթյուրումները հիմք են տալիս եզրակացնելու, որ 2017-2018թթ. վերահսկողական մեխանիզմները եղել են ոչ արդյունավետ:

6. ԱՅԼ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

Եզրակացության այս բաժնում ներկայացվել են այլ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որոնք Հաշվեքննիչ պալատը կարևոր է համարել ՍԱԻ-ի ղեկավարության և նախարարության ուշադրությանը ներկայացնելու համար:

Հաշվեքննության ընթացքում ի հայտ են եկել նաև այլ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որոնք թեև ստանդարտների մշակման և հաստատման գործընթացին առնչվել են անուղղակիորեն, սակայն կարող են ՍԱԻ-ի տվյալ գործունեության բարելավման համար էական նշանակություն ունենալ:

1. ՍԱԻ-ի կողմից կազմակերպված գնման գործընթացներն իրականացվել են չպահպանելով ոլորտը կարգավորող⁶⁷ օրենսդրության պահանջները: Մասնավորապես, 2017թ.-ին կազմակերպված գնման ընթացակարգերի վերաբերյալ ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչի հետևանքով հնարավոր չի եղել տալ գործընթացի իրականացման վերաբերյալ եզրակացություն: 2018թ. գնումների համակարգողի ծառայությունների ձեռքբերման պայմանագրի⁶⁸ գինը գերազանցել է գնումների բազային միավորը, սակայն ՍԱԻ-ի կողմից մրցութային ընթացակարգ չի կազմակերպվել, և գնումը իրականացվել է Մեկ անձից գնման ձևով, արդյունքում չպահպանելով օրենքի⁶⁹ պահանջները:
2. ՍԱԻ-ի կողմից կազմակերպված գնում կատարելու ընթացակարգերի դեպքում չի պահպանվել ՀՀ կառավարության որոշման⁷⁰ պահանջները, պայմանագրերը կամ դրանց փոխարինող փաստաթղթերը, հաշիվ ապրանքնագրերը, չեն մուտքագրվել էլեկտրոնային գնումների համակարգ, հանձնման ընդունման գործընթացը չի իրականացվել համակարգի միջոցով:
3. 2017-2018թթ. չի պահպանվել օրենքի⁷¹ պահանջները՝ սահմանված ժամկետներում չեն կազմվել և չեն հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունները:
4. ՍԱԻ-ի կողմից ընդունված ազգային ստանդարտները չեն հաշվառվել որպես ոչ նյութական ակտիվներ, ավելին՝ ՍԱԻ-ն 2017թ. չի իրականացրել ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրում, ինչի հետևանքով չի

⁶⁷ «Գնումների մասին» ՀՀ Օրենք (ՀՕ-21-Ն) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում

⁶⁸ 08.01.2018թ. կնքված ՍԱԻ-ՄԱԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմել է 1,800.0 հազ. դրամ

⁶⁹ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված

⁷⁰ ՀՀ կառավարության 04. 05.2017թ. թիվ 526-Ն որոշման 110-րդ կետի

⁷¹ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 9-րդ հոդվածի 5-րդ մասի

պահպանվել օրենքի⁷² պահանջները, համաձայն որի՝ «հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում»: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի պահանջների՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ: Արդյունքում, չի պահպանվել հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատության սկզբունքը:

ՍԱԻ-ի դիրքորոշում (1) – Ազգային ստանդարտների հաշվառումը որպես ոչ նյութական ակտիվներ տեխնիկապես հնարավոր չէ, քանի որ ազգային ստանդարտների և ազգային ստանդարտի կարգավիճակով ՀՀ-ում ընդունված միջպետական և ՌԴ ազգային ստանդարտների շարժը (ընդունումը, գործողության մեջ դնելը և գործողության դադարեցումը) անընդիստ փոփոխվող, ծավալուն և շարունակական գործընթաց է և ստանդարտների արժեքի վերաբերյալ չկա հստակ տեղեկատվություն:

Հաշվեքննողի արձագանք (1) – Ընդունվել է, կատարվել է համապատասխան խմբագրական աշխատանք:

ՍԱԻ-ի դիրքորոշում (2) – Համաձայն Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի 2018թ. հուլիսի 18-ի N 47-Լ հրամանի և ի փոփոխություն 2018թ. հուլիսի 28-ի N 54-Լ հրամանի՝ իրականացվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Կից ներկայացնում ենք հրամանները:

Հաշվեքննողի արձագանք (2) – Դիրքորոշումն ընդունվել է՝ հաշվի առնելով ՍԱԻ-ի կողմից ներկայացված հիմքերը:

5. Չի պահպանվել ՍԱԻ-ին Օրենքով⁷³ վերապահված՝ տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում մասնագետների ուսուցում և վերապատրաստում իրականացնելու գործառույթը: Հարկ է նշել, որ ՍԱԻ Ուսումնական կենտրոնը ընկերության կառուցվածքից հանվել է և դադարեցրել է իր գործունեությունը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 1404-Ա հրամանով:

⁷² Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս

⁷³ 2012 թվականի փետրվարի 8-ի «Ստանդարտացման մասին» ՀՀ-21-Ն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացրել ՀՀ-ում ստանդարտների մշակման և հաստատման գործընթացի նկատմամբ: Հաշվեքննության նպատակներին հասնելու համար հաշվեքննող խումբը կենտրոնացել է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս է կազմակերպվել ստանդարտացման պլանավորման գործընթացը
- Ինչպե՞ս է իրականացվել ստանդարտների մշակման, հաստատման և արդիականացման գործընթացը
- Գոյություն ունի՞ արդյոք վերահսկողություն ստանդարտների մշակման և հաստատման գործընթացում և որքանով է այն գործել:

Հաշվեքննիչ պալատը արձանագրել, որ 2017-2018թթ.-ին՝

- Ստանդարտացման ամենամյա ծրագիր չի մշակվել և չի հրապարակվել, իսկ պետական ստանդարտացման ամենամյա ծրագրի պլանավորումը ժամանակին չի իրականացվել և ՀՀ կառավարության կողմից չի հաստատվել:
- ՍԱԻ-ն չունի ստանդարտների ընտրության համար հստակ սահմանված չափանիշներով մեթոդաբանություն, որի արդյունքում պետության համար մշակվում են ստանդարտներ, որոնք արդեն գործում են կամ դրանցում կատարվում են միայն խմբագրական (կամ թարգմանչական) աշխատանքներ: Պետական ստանդարտացման 2017թ. և 2018թ. ծրագրերում ընդգրկվել են ստանդարտներ, որոնց պահանջը պետական կառավարման մարմինների կողմից չի ներկայացվել:
- Ստանդարտների արդիականացման աշխատանքները փաստաթղթավորված չեն եղել:
- Տեխնիկական հանձնաժողովների կողմից ստանդարտների նախագծերի ընդունման ընթացակարգերը կանոնակարգված չեն եղել. ստանդարտները մշակվել են որակավորում չունեցող մասնագետների կողմից, առանց համապատասխան մարմինների կարծիքի կամ առանց ՏՀ նիստ գումարելու:
- Ազգային ֆոնդում ներառված ստանդարտների վերլուծություն չի կատարվել, իսկ մինչև 1993թ. մշակված և ներկայումս գործող ստանդարտները ազգային ֆոնդի գրանցամատյանում չեն հաշվառվել:
- Վերջին տարիներին ՍԱԻ-ի բաժանորդներին տրամադրված և վաճառված ստանդարտների քանակը ունի նվազման միտում՝ 2019թ. նոյեմբերի դրությամբ վաճառվել է 2017թ. մշակված ստանդարտների 7% -ը, իսկ 2018թ.՝ 24%-ը:
- ՍԱԻ-ի կառավարման խորհրդի և նախարարության վերահսկողական մեխանիզմները 2017-2018թթ. գործել են ոչ լիարժեք, մասնավորապես կառավարման խորհուրդը չի գործել 2017թ. հոկտեմբերից, իսկ նախարարությունը չի ձեռնարկել համապատասխան վերահսկողական միջոցառումներ: ՍԱԻ-ի գործունեության հիմնական արդյունքների, այդ թվում՝

Ֆինանսական, նկատմամբ նախարարության կողմից մշտադիտարկում (մոնիթորինգ) չի կատարվել:

Հիմնվելով հաշվեքննության արդյունքների վրա՝ հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017-2018թթ. ստանդարտների պլանավորման, մշակման, ընդունման և արդիականացման գործընթացները իրականացվել են բազմաթիվ թերություններով: Նախարարությունը պատշաճ մակարդակով չի վերահսկել ՍԱԻ-ի գործունեությունը և համապատասխան միջոցներ չի ձեռնարկել թերությունները շտկելու ուղղությամբ: Հետևաբար, հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ 2017-2018 թվականներին ստանդարտների մշակման և հաստատման գործընթացի համար հատկացված ֆինանսական միջոցների օգտագործումը չի հանգեցրել օրենսդրորեն սահմանված նպատակային արդյունքների ամբողջական ստացմանը:

Առաջարկություններ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը (լիազորված պետական մարմին)

- Մշակել ոլորտի զարգացման արդի քաղաքականություն և սահմանել ստանդարտացման ոլորտի հեռանկարները: Այս քաղաքականությունը պետք է առնվազն ուշադրություն դարձնի.
 - Վաճառված ստանդարտների ցածր քանակներին,
 - Մասնավոր հատվածի կողմից ստանդարտների պահանջի ցածր հետաքրքրությունը,
 - Ստանդարտացման տարեկան ծրագրերում նույնական, նախկինում մշակված, չհիմնավորված ստանդարտների ներառմանը:
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վերանայել և հաստատել կառավարման խորհրդի անհատական կազմը և ապահովել խիստ վերահսկողություն օրենքով իրեն վերապահված բոլոր գործառույթների լիարժեք կատարման համար:
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այսուհետ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը:
- Քայլեր ձեռնարկել ՍԱԻ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը պարբերաբար աուդիտի ենթարկելու ուղղությամբ:
- ՍԱԻ-ի կանոնադրության համաձայն՝ ձևավորել Վերստուգող հանձնաժողով և ապահովել վերջինիս բնականոն գործունեությունը

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝

- Մշակել և հաստատել պետական ստանդարտացման ամենամյա ծրագրում ներառվող ստանդարտների ընտրության մեթոդաբանություն, որը հիմնված կլինի ստանդարտացման ռազմավարության և ՀՀ-ում գերակա հռչակված ոլորտների առաջնահերթությունների վրա:
- Ստանդարտացման ազգային ծրագրերի հաստատման նախապատրաստական աշխատանքները կազմակերպել սահմանված ժամկետներում:
- Տեխնիկական հանձնաժողովների գործունեությունը կազմակերպել բացառապես ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան, սեղմ ժամկետներում վերանայելով ստեղծված բոլոր հանձնաժողովների անհատական կազմերը, դրանց կանոնադրությունները և մշակել աշխատանքային ծրագրեր:
- Ռազմական արդյունաբերության արտադրանքի համար մշակել ստանդարտացման աշխատանքների ամենամյա ծրագիր:

- Պարբերաբար կատարել ստանդարտների ազգային ֆոնդի վերլուծություն՝ դրանում ընդգրկված ստանդարտների նորացման ու արդիականացման նպատակով:
- Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ մշակել ստանդարտների վաճառքի ռազմավարություն, դրա հիմքում դնելով հասարակության լայն շրջանկների իրազեկվածության բարձրացման բաղադրիչը:
- Լիազորված մարմնի հետ քննարկել 2017թ.-ին առանց հիմնավորող մշակման փաստաթղթերի առկայության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության տնօրենի համապատասխան հրամաններով ընդունված և գործողության մեջ դրված թվով 10 ստանդարտների դադարեցման/անվավերության հարցը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքը,
2. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 21.04.2017թ. թիվ 395-Ա հրամանով հաստատված «Ստանդարտների մշակման ծառայությունների 2017թ. ծրագիրը»,
3. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 20.02.2018թ. թիվ 117-Ա հրամանով հաստատված «Ստանդարտների մշակման ծառայությունների 2018թ. ծրագիրը»,
4. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՍԱԻ միջև կնքված 17.05.2017թ. թիվ 21-17 և 16.03.2018թ թիվ 32-18 պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերը,
5. ՀՍՏ 1.2-2013, ՀՍՏ 1.6-2006 և ՀՍՏ 1.8-93 հիմնադրույթային ստանդարտները, որոնք սահմանում են ստանդարտացման աշխատանքների կատարման ընդհանուր կազմակերպամեթոդական կանոնները, հիմնական խնդիրները և սկզբունքները, ստանդարտացման օբյեկտները, ստանդարտների տեսակները, ինչպես նաև ազգային ստանդարտների մշակման կարգը, դրանց կառուցմանը, շարադրմանը, ձևավորմանը և բովանդակությանը ներկայացվող պահանջներ և այլն,
6. Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO) 2002 թվականի դեկտեմբերի 10-ի «Առևտրի տեխնիկական խոչընդոտների համաձայնագրի» պահանջները՝ միջազգային և եվրոպական ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման վերաբերյալ,
7. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիրը,
8. Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր,
9. Ստանդարտացման ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր:

2017թ. ծրագրի մշակման համար պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները

Հ/Հ	Պետական կառավարման մարմինները	Պահանջը	Առաջարկվող և մշակման ենթակա ստանդարտն երի քանակը	Ընտրված ստանդարտների քանակը	Ստանդարտի մշակման անհրաժեշտու թյան հիմնավորում	ՓԲԸ մեկնաբանությունը
1	Պաշտպանության նախարարություն	5	4	4	բացակայում է	Ստանդարտներից մեկի առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՓԲԸ-ն նախատեսում է մշակել ազգային ստանդարտ՝ ԻՍՕ 9000:2015 ներդաշնակ, որի դրույթները և պահանջները տարածվում են նաև ռազմական տեխնիկայի արտադրության ոլորտի
2	Գյուղատնտեսության նախարարություն	78	71	19	բացակայում է	Թվով 3 ստանդարտ կրկնվում է, թվով 1-ը չի գործում, թվով 4 ստանդարտ գտնվում են վերանայման ընթացքում և դրանց ընդունումը նպատակահարմար չէ: Ծրագրում ընդգրկվել է միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 19 ազգային ստանդարտի մշակում:
3	ՀՀ բնապահպանության նախարարություն	3	3	0	բացակայում է	Ծրագրում չեն ընդգրկվել, քանի որ առաջարկություններում նշված չեն այդ ստանդարտների մշակման նպատակները, ինչպես նաև դրանց կիրառման և ներդրման արդյունքում տվյալ ոլորտի աշխատանքների կարգավորումը: Նշված չէ նաև, թե որ միջազգային ստանդարտների հիման վրա պետք է մշակվեն ազգային ստանդարտները՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները
4	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը	3	3	3	առկա է	Ծրագրում ընդգրկվել է առաջարկված միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 3 ազգային ստանդարտի մշակում:
5	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	8	8	2	առկա է	Ծրագրում ընդգրկվել է առաջարկված միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 2 ազգային ստանդարտի մշակում:
6	Առողջապահության նախարարություն	77	23	1	բացակայում է	Առաջարկված ստանդարտներից թվով 7-ը արդեն գործում են, թվով 1-ը կրկնվում է, իսկ միջպետական ստանդարտները (ԳՕՍՏ-31 հատ) ՀՀ-ում գործում են, իսկ ՌԴ ստանդարտները (ԳՕՍՏ Ռ- 15 հատ)

						սահմանված կարգով ՀՀ-ում կարելի է գործողության մեջ դնել: Ծրագրում ընդգրկվել է առաջարկված միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 1 ազգային ստանդարտի մշակում:
7	Քաղաքականության պետական կոմիտե	14	9	3	առկա է	Առաջարկված ստանդարտներից թվով 2-ը կրկնվում է, թվով 1-ը արդեն գործում է, թվով 2-ը չի գործում: Ծրագրում ընդգրկվել է առաջարկված միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 3 ազգային ստանդարտի մշակում
8	ՀՀ ոստիկանություն	2	2	1	բացակայում է	Ծրագրում ընդգրկվել է առաջարկված թվով 1 ազգային ստանդարտի մշակում
9	ՀՀ ֆինանսների նախարարություն	0				
10	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	0				
11	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	0				
12	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	0				
13	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը	0				
14	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	0				
ԸՆԴԱՄԵՆԸ		190	123	33		

2018թ. ծրագրի մշակման համար պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները

Հ/Հ	Պետական կառավարման մարմինները	Պահանջը	Առաջարկվող և մշակման ենթակա ստանդարտն երի քանակը	Ընտրված ստանդարտն երի քանակը	Ստանդարտի մշակման անհրաժեշտության հիմնավորում	ՓԲԸ մեկնաբանությունը
1	Պաշտպանության նախարարություն	10	9	9	բացակայում է	Թվով 1 ստանդարտ չի ընդգրկվել, քանի որ արդեն իսկ մշակված է :
2	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	1	0	0	առկա է	Առաջարկված ստանդարտը վերանայվում է ԻՍՕ-ի կողմից և դրա մշակումը նպատակահարմար չէ :
3	Բնապահպանության նախարարություն	7	6	1	բացակայում է	Թվով 1 ստանդարտ արդեն իսկ մշակված է: Ծրագրում ընդգրկվել է միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 1 ազգային ստանդարտի մշակում:
4	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	3	3	1	առկա է	Ծրագրում ընդգրկվել է միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 1 ազգային ստանդարտի մշակում:
5	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	20	20	2	առկա է	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համաձայնությամբ առաջարկված ցանկից ծրագրում ընդգրկվել են միջազգային ստանդարտին ներդաշնակ թվով 2 ազգային ստանդարտների մշակում:
6	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը	1	1	1	առկա է	Ծրագրում ընդգրկվել է առաջարկված միջազգային ստանդարտին ներդաշնակ ազգային ստանդարտի մշակում:
7	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հավատարմագրման ազգային մարմին ՊՈԱԿ	5	2	2	առկա է	Առաջարկված ստանդարտներից թվով 1-ը արդեն իսկ մշակված է, իսկ թվով 2-ը վերանայվում են ԻՍՕ-ի կողմից և դրանց մշակումը նպատակահարմար չէ : Ծրագրի նախագծում ընդգրկվել է միջազգային ստանդարտներին համարժեք թվով 2 ազգային ստանդարտների վերանայում:

8	Առողջապահության նախարարություն	101	51	3	բացակայում է	Առաջարկված ստանդարտներից միջպետական ստանդարտները (ԳՕՍՏ-29 հատ) ՀՀ-ում գործում են, ՌԴ ստանդարտները (ԳՕՍՏ Ռ-14 հատ) սահմանված կարգով ՀՀ-ում կարելի է գործողության մեջ դնել, իսկ թվով 7 ստանդարտ արդեն իսկ մշակված է: ՀՀ առողջապահության նախարարության համաձայնությամբ ընտրվել են միջազգային ստանդարտներին ներդաշնակ թվով 3 ազգային ստանդարտների մշակում:
9	ՀՀ ոստիկանություն	1	1	1	առկա է	Ընդգրկվել է ՀՍՏ 185 ազգային ստանդարտի վերանայում:
10	ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	15	10	3	առկա է	Առաջարկված ստանդարտներից թվով 2-ը արդեն իսկ մշակված է, իսկ թվով 3-ը վերանայվում են ՍԵՆ-ի կողմից և դրանց մշակումը նպատակահարմար չէ: Ելնելով առաջնահերթությունից՝ ընդգրկվել են միջազգային ստանդարտներին ներդաշնակ 3 ազգային ստանդարտների մշակում:
11	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	0				
12	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	0				
13	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	0				
14	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը	0				
15	Գյուղատնտեսության նախարարություն	0				
ԸՆԴԱՄԵՆԸ		164	103	23		

2017թ. պետական ստանդարտացման ծրագրի վերաբերյալ

	Ծր. կետ	Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը	Առաջարկող պետական մարմինը	Էջեր ի քան ակը	Ծախս ը (հազ. դրամ)	Ստանդար տի ընդունման ամսաթիվ, հրաման	Նամակներ, կարծիքներ, կարծիքների ամփոփագի ր	ՏՀ կամ աշխատանքային խմբի նիստի արձանագրությա ն ամսաթիվը	Մշակողը	Ստանդարտ մշակողի անուն, ազգանունը	Մեկնաբանություններ
1	1.1	ՀՍ Ռ 0015.001-2017	Ռազմական տեխնիկայի արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Հիմնական դրույթներ	ՀՀ ՊՆ	Գաղ տնի	283.20	Գաղտնի	Գաղտնի	Գաղտնի	Ռազմական ՏՀ	Գաղտնի	Գաղտնի
2	1.2	ՀՍ Ռ 0015.002-2017	Ռազմական տեխնիկայի արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Որակի կառավարման համակարգեր: Ընդհանուր պահանջներ	ՀՀ ՊՆ	Գաղ տնի	383.70	Գաղտնի	Գաղտնի	Գաղտնի	Ռազմական ՏՀ	Գաղտնի	Գաղտնի
3	1.3	ՀՍ Ռ 15.801-2017	Արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Ռազմական տեխնիկա. Արտադրությունից արտադրատեսակների հանումը. Հիմնական դրույթներ	ՀՀ ՊՆ	Գաղ տնի	438.50	Գաղտնի	Գաղտնի	Գաղտնի	Ռազմական ՏՀ	Գաղտնի	Գաղտնի
4	1.4	ՀՍ Ռ 15.702-2017	Արտադրանքի մշակման և արտադրության կազմակերպման համակարգ. Ռազմական տեխնիկա. Նշանակված ռեսուրսի, ծառայության ժամկետի, պահպանման ժամկետի սահմանման և երկարաձգման կարգ	ՀՀ ՊՆ	Գաղ տնի	231.70	Գաղտնի	Գաղտնի	Գաղտնի	Ռազմական ՏՀ	Գաղտնի	Գաղտնի
5	2.1	ՀՍ ԵՆ 15316-4-1- 2017	Շենքերի ջեռուցման համակարգեր. Համակարգի էներգիայի պահանջարկի և արդյունավետության հաշվարկման մեթոդ. Մաս 4-1. Ջեռուցվող տարածքներ ջերմության ստացման, փոխադրման և փոխանցման համակարգեր, այրման համակարգեր (կաթսաներ, կենսազանգված)	ՀՀ էներգետիկ ենթ. և բն. պաշար. նախ.	-	333.10	N 84-L առ 11.12.2017					Ստանդարտը բացակայում է
6	2.2	ՀՍ 393-2017	Հայկական այբուբենի տառերի գրադարձությունը լատիներեն այբուբենի տառերով. Կանոններ և կիրառման ցուցումներ	Վարչապետի հանձնարարական	7	365.40	N 67-L առ 03.11.2017	31.10.2017 Այո	01.11.2017	Աշխատանքային խումբ	Լ.Հովհաննիսյան	
7	3.1	ՀՍ ԱՍՏՄ Ս- 666-2017	Արագացված սառեցման և հալեցման նկատմամբ բետոնի կայունության փորձարկման մեթոդներ	Քաղաքաշինությա ն պետական կոմիտե	16	164.40	N 35-L առ 03.07.2017	-	22.06.2017	Ստանդար տացում աշխ. խումբ	Գ.Պետրոսյան	Աշխատանքային խմբի կազմում մասնագետներ չկան, կարծիքներն ու առաջարկությունները բացակայում են
8	3.2	ՀՍ ԵՆ 206-2017	Բետոն. Տեխնիկական պայմաններ, շահագործման բնութագրեր, արտադրություն և պահանջների համապատասխանություն	Քաղաքաշինությա ն պետական կոմիտե	-	347.10	N 86-L առ 12.12.2017					Ստանդարտը բացակայում է
9	3.3	ՀՍ ԵՆ 14706-2017	Շենքերի սարքավորման և արտադրական կայանքների համար ջերմամեկուսիչ արտադրատեսակներ. Շահագործման առավելագույն ջերմաստիճանի որոշում	Քաղաքաշինությա ն պետական կոմիտե	16	237.50	N 86-L առ 12.12.2017	-	05.12.2017	Ստանդար տացում աշխ. խումբ	Գ.Պետրոսյան	Աշխատանքային խմբի կազմում մասնագետներ չկան

10	4.1	ՀՍ ՌՍՕ/ԻԷԿ 27000-2017	«Տեղեկատվական տեխնոլոգիաներ. մնվածանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր. Ընդհանրական վերլուծություն և բառարան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղ. տեխն. նախ.	-	182.70	N 85-L առ 11.12.2017					Ստանդարտը բացակայում է
11	5.1	ՀՍ ՌՍՕ 6406-2017	Գազի բալոններ. Պողպատե անկարան գազի բալոններ. Պարբերական հսկողություն և փորձարկում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղ. տեխն. նախ.	-	155.30	N 82-L առ 07.12.2017					Ստանդարտը բացակայում է
